

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

مارزقك

مجلة رياضية شهيرة
تصدرها جمعية الهولمنتمن بيروت

ԻԸ ՏԱՐԻ, 2009, ԹԻԻ 10 (328) - VOL. XXVIII N°10 - العدد 10 - السنة الثامنة والعشرون

marzig
SPORTS MAGAZINE



ՌԳ

Raffi Berberian



ԱՄԽԱՊԱՅԱՄԱՆՆԵՐԻՆ ՈՋ

ՏՈՒՐԱՆԱՆՔ ՏԳԻՋԵՆՔ ԸՆԴՎԳԵՆՔ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքը խոր մտահոգությամբ կը հետեւի հայ-թրքական յարաբերութիւններու վերջին զարգացումներուն, որոնք լրջօրէն կը վտանգեն Հայաստանի եւ հայութեան ազգային անվտանգութիւնն ու արժանապատուութիւնը:

Հայ-թրքական դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման, պետական սահմանի բացման եւ յարաբերութիւններու կարգաւորման մասին հրապարակուած փաստաթուղթերը ունին պարտուողական բնոյթ եւ կ'ընդգրկեն թուրքիոյ կողմէ քողարկուած նախապայմաններ:

Արդարեւ, հայ-թրքական ներկայ սահմանը վերահաստատելու քայլը անուղակիօրէն կը կատարէ Կարսի պայմանագիրը ծանչնալու թրքական պահանջը եւ կ'առաջնորդէ հողային մեր պահանջատիրութենէն հրաժարելու ազգավնաս քայլին:

Միւս կողմէ, հայ-թրքական սահմանին բացումը Արցախեան հարցին առնչելու թրքական մօտեցումը կ'ենթադրէ հայկական ազատագրեալ տարածքները վերադարձնելու եւ Ազրպէյճանի հողային ամբողջականութիւնը ծանչնալու իրողութիւնը, ինչ որ մերժելի է մեր բազմահազար նահատակներու արեամբ կատարուած նուաճումներու հաշուոյն:

Անընդունելի կը գտնենք նաեւ պատմական-արխիւային հարցերով զբաղող յանձնախումբի մը կազմութեան առաջարկը, որովհետեւ ան քննարկումի առար-

կայ կը դարձնէ պատմական անվիճելի ճշմարտութիւն մը եւ կասեցուցած կ'ըլլայ Ցեղասպանութեան ծանաչման համար տարուող մեր աշխատանքները: Մենք չենք կրնար հրաժարիլ սերունդներու պատկանող անժամանցելի մեր իրաւունքներէն: Ցեղասպանութեան ծանաչման հարցը մեր հայրենիքի անվտանգութեան հարցըն է, մեր ազգի արժանապատուութեան հարցն է, արդարութեան հարցն է եւ Հայ Դատի մեր պայքարին անբաժանելի մէկ մասնիկն է:

Հ.Ս.Ը.Ս., որ տասնամեակներ շարունակ տերն ու պահպանը եղած է ազգային մեր իրաւունքներուն եւ արժեքներուն, այսօր չի կրնար ընդունիլ ազգին արժանապատուութեան հասնող նման հարուած, հետեւաբար ան կը հաստատէ, թէ հայ-թրքական յարաբերութիւններու հարցը համայն հայութեան հարցն է եւ այդ ուղղութեամբ հայրենի վարիչներուն առնելիք քայլերը սպասելի է, որ համապատասխան ըլլան համայն հայութեան արդար ակնկալութիւններուն եւ սպասումներուն:

Արդ, Հ.Ս.Ը.Ս. բողոքի իր ձայնը կը միացնէ հայ-թրքական յարաբերութիւններու ներկայ փաստաթուղթերու որդեգրման դէմ եւ կոչ կ'ուղղէ հաւաքական մերժումով արմատական փոփոխութիւններու ենթարկելու զանոնք:

Հ.Ս.Ը.Ս.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԻՆԿՆ ՆԻՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزنيك مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթիթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻԸ. ՏԱՐԻ, 2009, ԹԻ 10 (328)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՂԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աթո Մոսիկեան
 Գօգօ Մկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի ճէճեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Ներսէս Արք. Բախտիկեան, Հրայր
 Տիշչէքէնեան, Գ. Թորոյեան,
 Սալբի Լատոյեան
 Եւ շրջաններու թղթակիցներ:
 Էջարդում - Հարութ Զեօրէճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողբի Ձեւաւորում՝ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon


ՏՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատակաճառի սակն է 3000 Լ.Ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ձշդուած է 35000 Լ.Ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկլուսի
 Եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 Եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա Եւ Աւստրալիա՝ \$55):



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Սկաուտական 3
- Պատմութիւն 12
- Մեր Տեսակցութիւնները 15
- Անդրադարձ 17
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 22



ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 19
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոյ մարզախաղերուն առիթով՝
 Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրի Հ.Մ.Ը.Մ.ին
 կը նուիրէ 50 հազար ամ. տոլար:



ՆԱԳՏ

25 ՀԱՉԱՐ «Ո՛Յ»

Պէտք չէ ստորագրուէին: Ստորագրուեցան, հակառակ համաժողովրդային բողոքի եւ ընդվզումի այն մեծ ալիքին, որուն մասնակից դարձաւ Գ.Ս.Ը.Ս., աշխարհասփիւռ իր 100 մասնաճիւղերու 25 հազար անդամներով:

Գ.Ս.Ը.Ս., անմիջական ծնունդը Ցեղասպանութեան, եղաւ առաջիններէն, որ «Ո՛Յ» ըսաւ՝

- Այսօրուան Թուրքիոյ պետական սահմաններու ծանաչման:
- Հայկական Ցեղասպանութեան միջազգային ծանաչման աշխատանքներու դադրեցման:
- Արցախի հարցը հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման կապելու մօտեցման:

Գ.Ս.Ը.Ս. իր «Ո՛Յ» ըսաւ հայրենատիրոջ իր իրաւունքով, գիտակից յանձնառութեամբ եւ ամուր վճռակամութեամբ:

Գ.Ս.Ը.Ս. իր «Ո՛Յ» ըսաւ ու պիտի շարունակէ բարձր ըսել, որովհետեւ Ցիւրիխի պարտուողական ստորագրութիւնը կը նպատակադրէ Հայ Դատը գերեզմանել եւ ազգային պահանջատիրութեան մեր երթը կասեցնել, ծանր հարուած հասցնելով վերապրողներու եւ անոնց ժառանգորդներու յիշողութեան ու արժանապատուութեան:

«Ո՛Յ», որովհետեւ Ցեղասպանութեան ծանաչման պահանջը ինքնանպատակ չէ: Ցեղասպանութիւնը գործուած է հողի համար: Հետեւաբար, անոր ծանաչումը չ'անջատուի հայութեան ազգային իրաւունքէն, որ ՀՈՂՆ է, այսինքն՝ բռնագրաւեալ Հայաստանի վերադարձը իր իրաւատիրոջ՝ հայութեան:

«Ո՛Յ», որովհետեւ սահմաններու բացումը, Հայաստանի տնտեսական զարգացումը եւ բարգաւաճումը չեն կրնար ըլլալ ազգային գերագոյն շահերու

հաշուոյն: Բայց արդեօք եղած չե՞ն արդէն...: «Փակ սահման»ով Հայաստան-Թուրքիա շաբաթական երկու երթեւեկը, երեւանի շուկաներուն թրքական ապրանքներով ողողումը ի՞նչ կը թելադրեն...

«Ո՛Յ», որովհետեւ թուրքը՝ թշնամի՛ն չէ հրաժարած Հայաստանն ու հայութիւնը տկարացնելու իր հետեւողական ծրագիրէն: Մէկ կողմէ ան Հայաստանի կը թելադրէ ձերբագատիլ Սփիւռքի ազդեցութենէն, իսկ միւս կողմէ ան Ցիւրիխի համաձայնութեան կապուած իր մեկնաբանութիւններով կը փորձէ Սփիւռքը լարել Հայաստանի դէմ, վտանգաւոր սեպ մը խրելով երկուքին միջեւ:

«Ո՛Յ» նաեւ, որովհետեւ մարմնակրթական միութիւն մը ըլլալով հանդերձ, ազգային-քաղաքական մեր հաւատամքը մեզ կը պարտաւորեցնէ անդուլ տէ՛ր կանգնիլ հայութեան պահանջներուն:

Մենք դեռ հողեր ունինք թուրքերէն առնելու եւ ոչ թէ անոնց զիջելու: Մեր «Ո՛Յ» ըլլալով յստակ պատգամ մըն է բոլորին, թէ յոգնիլը մեղք է մեզի համար: Իւրաքանչիւր հայ, ուր ալ գտնուի ան, ինչ դիրքի վրայ ալ որ ըլլայ, համեստ հայէն մինչեւ երկրի իշխանութիւններու գլխաւորը, իրաւունք չունի զիջումներ կատարելու ի վնաս ազգին ու հայրենիքին: Հիմնականը համազգային մեր վճռակամութեան ամրապընդումն է՝ չընկրկելու, զիջումներ չկատարելու, դիւանագիտութեան սիրոյն չտկարանալու, այլ՝ տեւաբար պահանջատիրոջ եւ իրաւատիրոջ դիրքերէն ներկայանալու:

Մենք դատապարտուած ենք յաղթելու: Հետեւաբար, վճռած ենք ո՛չ մէկ գնով զիջիլ անժամանցելի մեր իրաւունքները եւ անոնց կարելորագոյնը՝ հողը հայրենի, որուն 161.370 քառ. քմ.ը նուիրագործուած է մեր «քաջ որդւոց սուրբ արիւնով»:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝

ՎԿԱՅԵԱԿ ԿԱՐԳԻ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՈՐԱԿԱԲՈՐՄԱՆ ՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ ՓԱՐԻԶԻ, ՀԱԷՊԻ ԵՒ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, 2009ի ամրան, ցամաքամասային դրութեամբ տեղի ունեցան Վկայեալ կարգի եւ խմբապետներու վերաորակաւորման երեք դասընթացքներ, որոնք կը թելադրուէին միութեան Պատգամաւորական 9րդ Ընդհանուր Ժողովէն եւ որոնց գիտելիքները համադրուած էին համա-Հ.Մ.Ը.Մ.ակն խմբապետական Ե. համագումարին կողմէ (2008):

Կեդրոնական Վարչութիւնը, մշակուած ծրագիրը յաջողցնելու համար, Լիբանանի շրջանէն յառաջացուց դասընթացքի կազմակերպական յանձնախումբ մը, որ կը բաղկանար անցեալի վաստակաւոր խմբապետ-խմբապետուհիներէ՝ եղբայրներ Վաչէ Նաճարեան, Բաֆֆի Կեօվողլանեան, քոյրեր Թալին Օրտողլեան եւ Սեդա Պէշլեան:

Յանձնախումբը պաշտօնի կոչուեցաւ Յունուար 2009ին: Ան ունեցաւ հերթական աշխատանքային հանդիպումներ, ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան սկաուտական ներկայացուցիչին՝ եղբ. Կարպիս Գապասագալեանի, եւ գործեց մինչեւ դասընթացքներու աւարտը:

Յանձնախումբը առաջին հերթին աշխատանքի լծուեցաւ ճշդուած 32 նիւթերու՝ ազգային, կրօնական, միութեանական, սկաուտական, քաղաքացիական եւ ընկերային գիտելիքներու պատրաստութեամբ: Նիւթերը կը հաշուեն աւելի քան 125 գրա-

շարուած էջեր: Նկատի ունենալով կարգ մը շրջաններու մասնակցողներու լեզուական դժուարութիւնները, անոնք ընթերցուած արձանագրուեցան խտասալիկներու վրայ եւ դասընթացքի թղթածը-րարներուն հետ տրամադրուեցան շրջաններուն:

Յանձնախումբը պատրաստեց նախագիծ-յայտագիր մը՝ նիւթերու յաջորդականութեան եւ անոնց գործադրութեան համար: Այս նպատակով ցամաքամասերու մէջ յառաջացուեցան գործադիր խմբապետական կազմեր:

Դասընթացքի կազմակերպիչ յանձնախումբի անդամները՝ քոյրեր Թալին Օրտողլեան, Սեդա Պէշլեան եւ եղբ. Վաչէ Նաճարեան գործօն դերակատարութիւն ունեցան Եւրոպայի եւ Միջին Արեւելքի դասընթացքներուն:

Դասընթացքի գործնական հանգրուանը իրագործուեցաւ երեք ցամաքամասերու մէջ, առաջինը՝ Եւրոպա 1-5 Յուլիս, Փարիզ (Ֆրանսա), երկրորդը՝ Միջին Արեւելք 22-26 Յուլիս, Հալէպ (Սուրիա), երրորդը՝ Ամերիկա 3-7 Սեպտեմբեր, Լոս Անճելըս (Քալիֆորնիա):

Կեդրոնական Վարչութիւնը դասընթացքներու աշխատանքներուն մօտէն հետեւելու եւ հսկելու առաջադրութեամբ իր կազմէն, երեք ցամաքամասերուն համար, գործուղեց եղբ. Կարպիս Գապասագալեանը: Ամերիկայի ցամաքամասին եղբոր միացաւ եղբ. Գարլոս Սէֆերեանը՝ Արժանթինէն:

ԵՒՐՈՊԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՅՔԸ

Խմբապետներու վերաորակաւորման եւ վկայեալ կարգի միջ-ցամաքամասային առաջին դասընթացքը տեղի ունեցաւ Ֆրանսա, «Ժամվիլ» բանակավայրին մէջ, 1-4 Յուլիս 2009ին:

Դասընթացքին բացումը տեղի ունեցաւ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեանի, կազմակերպիչ խմբապետական

կազմէն եղբ. Վաչէ Նաճարեանի, քոյրեր Թալին Օրտողլեանի եւ Սեդա Պէշլեանի, ինչպէս նաեւ՝ դասընթացքին մասնակից 20 քոյրերու եւ եղբայրներու՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն, Լոնտոնէն, Երուսաղէմէն եւ Պուլկարիայէն:

Դրօշակի արարողութենէն ետք, հիւրընկալ շրջանի՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խմբապետ եղբ. Պօղոս Մահպուտեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան: Ան ըսաւ, թէ առաջին անգամը ըլ-



**Դասընթացքին պատասխանատուները
Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչական անդամներու հետ:**



**Եղբ. Վաչէ Նաճարեան
դասախօսութեան պահուն:**



**Եղբ. Կարպիս Գապասագալեան
դասախօսութեան պահուն:**



**Քոյր Թալին Օրտողլեան
դասախօսութեան պահուն:**

լարով միջ-ցամաքամասային տարրգոլթեամբ խմբապետներու պատրաստութեան դասընթացքի ձեռնարկած ենք, այս դասընթացքը առաջինն է եւ կը նշանակէ թէ դուք բախտաւորներ էք: Մենք կը պատկանինք միայն մէկ դրօշակի եւ մէկ դրօշակի կը ծառայենք,- շարունակեց եղբ. Գապասագալեան, կը նշանակէ որ ամէն ինչ պիտի ըլլայ նոյնը եւ մենք հոս պիտի դիտնանք, որ աշխարհի ամբողջ տարածքին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները իրենց խմբապետներով, այսինքն՝ ձեր միջոցներով, բոլորը նոյնը դիտեն, նոյնը կը սորվին, ըլլայ անիկա ազդային թէ սկաուտական գիտելիքներու մէջ: Եղբայր յաջողութիւն յայտնեց բոլորին՝ մաղթելով դասընթացքի բարեկաջող ընթացք:

Դասընթացքին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն, Պոլսկարիայէն, Լոնտոնէն եւ Երուսաղէմէն քոյրեր եւ եղբայրներ, որոնք չորս օրուան ընթացքին հետեւեցան դասախօսական հետեւեալ նիւթերուն.-

- Ա. Ազգային
- Բ. Միութենական
- Գ. Կրօնական
- Դ. Հոգեբանական
- Ե. Սկաուտական

Դասընթացքին մասնակիցները ստացան հետեւեալ նիւթերը .-

- Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան ընդհանուր ուղեգիծը (եղբ. Կարպիս Գապասագալեան):
- Չորս հիմնական սիւները. Գայլիկական բաժին (քոյր Թալին Օրտողլեան), Արիական բաժին (եղբ. Պետրոս Մարտիրոսեան):
- Վարչական բաժանումները եւ խմբապետին դերը (եղբ. Վաչէ Նաճարեան):
- Խումբի խմբապետութեան աշխատելաձեւը (քոյր Թալին Օրտողլեան):
- Սկաուտական խմբաւորումներու կազմակերպչական կառոյցը (եղբ. Վաչէ Նաճարեան):
- Խմբապետին յարաբերութիւնը գերադաս եւ ստորադաս պատասխանատուներու հետ (քոյր Սեդա Պէշլեան):
- Խմբապետին, փոխ խմբապետին եւ վարիչ առաջնորդին դերը ժողովներու մէջ (եղբ. Վաչէ Նաճարեան):
- Ծրագրումի եղանակ (քոյր Սեդա Պէշլեան):
- Սկաուտական յայտագիրներու հիմք եւ գործադրութեան եղանակ (քոյր Թալին Օրտողլեան):
- Դաստիարակութեան մարզեր (քոյր Սեդա Պէշլեան):

● Ազգային դաստիարակութեան անհրաժեշտութիւնը (եղբ. Սեւակ Թորոսեան):

● Ըմբռնել փոխ յարաբերութիւններու հասկացողութիւնը (եղբ. Վաչէ Նաճարեան):

● Հ.Մ.Ը.Մ.ի վարչական կառուցը (եղբ. Կարպիս Գապասագալեան):

● Վարուելակերպի հարցեր (քոյր Թային Օրտոդլեան):

● Կրօնական դաստիարակութեան կարեւորութիւնը (եղբ. Կարպիս Գապասագալեան):

● Թղթածրարի պատրաստութիւն (քոյր Սեղա Պէշլեան):

● Բարոյականութեան հասկացողութիւն (եղբ. Կարպիս Գապասագալեան):

● Սկստական իւրայատկութիւնը եւ խմբապետին դաստիարակութեան դերը (եղբ. Վաչէ Նաճարեան):

● Լաւ խումբ մը ունենալու տուեալները (քոյր Սեղա Պէշլեան):

● Հ.Մ.Ը.Մ.ի սկստական դերը Հայ Դատի հետապնդման մէջ (եղբ. Կարպիս Գապասագալեան):

● Քննարկումի եւ արժեւորումի առաւելութիւնները (քոյր Թային Օրտոդլեան):

Դասախօսութիւններու կողքին, ամէն գիշեր տեղի ունեցան զրոյցներ եւ կլոր սեղաններ, ուր մասնակիցները արծարծեցին սկստութիւնը յոգող հարցեր: Անոնք արտայայտուեցան նաեւ սկստութեան այժմէականութեան մասին:

Դասախօսական նիւթերու շարքին, մասնակից քոյրերուն եւ եղբայրներուն փոխանցուեցան սկստական արարողութիւններու ձեւերը եւ կարգապահական վարժութիւններ:

Դրօշակի արարողութեանէն ետք, օրուան պատգամը փոխանցուեցաւ ամէն օր նիւթ մը նկատի ունենալով՝ «Վստահութիւն, վստահելիութիւն», «Հաւատարմութիւն», «Ծառայութիւն»:

«Սկստութիւն միշտ գուարթ ու խանդավառ է» ղաւանջի կէտէն մեկնած, սկստներ մթնոլորտը ճոխացուցին իրենց կանչերով եւ երգերով:

Չորսօրեայ դասընթացքի փակման արարողութեան ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը: Վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեան շնորհակալութեան խօսք փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան՝ այս դասընթացքին համար, որ Եւրոպայէն քոյրեր եւ եղբայրներ համախմբեց սկստական գիտելիքներ փոխանցելու անոնց:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան խօսք առնելով նշեց որ այս



Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանի շիրիմին շուրջ:

դասընթացքին մասնակցողները իրենց ուսերուն վրայ պարտականութիւն մը ունին, այդ պարտականութիւնն է իրենց կրտսեր եղբայրներուն փոխանցել այն ինչ որ ստացան չորս օրուան ընթացքին: Եղբայրը յաջողութիւն մաղթեց եւ Կեդրոնական Վարչութեան անունով եւ շնորհակալութիւն յայտնեց դասընթացքի հիւրընկալ՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսիին: Յաջողեց մասնակցութեան հաստատագիրներու փոխանցում: Ապա, վարչութիւններու առաջարկով Վկայեալ կարգի հաստատագիրներ ստացան հետեւեալ

եղբայրները.- Պողոս Մահպուտեան (Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս), Պետրոս Մարտիրոսեան (Հ.Մ.Ը.Մ. Լոնտոն), Յարութ Պաղամեան եւ Ռուբէն Նալպանտեան (Հ.Մ.Ը.Մ. Երուսաղէմ):

Կիրակի, 5 Յուլիս 2009ին, դասընթացքի աշխատանքներու աւարտէն ետք, մասնակից քոյրերն ու եղբայրները այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն եղբ. Գրիգոր Յակոբեանի շիրիմը, ուր իրենց յարգանքի տուրքը մատուցեցին եւ ծաղկեպսակ մը գետեղեցին: Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան խօսք առնելով ըսաւ.

«Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, կը կարծեմ որ միակ տեղն է որ մենք բացատրութիւն չունինք տալիք, բոլորս ալ իբրեւ բարձրաստիճան խմբապետներ լաւ կը գիտակցինք, թէ ուր կը գտնուինք: Խորքին մէջ մեր այսօրուան գոյութիւնը կազմող մեր հիմնադիրին, առաջին սկստապետին այս անխօս շիրիմին դիմաց կանգնած ենք: Ես կը կարծեմ որ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական որ այս երկիրը կ'այցելէ պէտք է անպայմանօրէն պարտականութիւնը զգայ յարգանքի նուազագոյն տուրքը մատուցելու մեր հիմնադիրին՝ անոր գերեզմանին առջեւ գալով եւ խոնարհելով»:

Շարունակելով, եղբ. Գապասագալեան յայտնեց. «Մենք այս դասընթացքին տեղորոշութեան շատ բաներու մասին խօսեցանք, սակայն այս վայրը, այս անխօս շիրիմը իրականութեան մէջ մեզի համար հաղորդարան է, պիտի դառնայ ներշնչարան վաղուան մեր բոլոր աշխատանքներուն: Իբրեւ գիտակից խմբապետներ, մենք եկած ենք մեր սկստապետին անդամ մը եւս ըսելու, իբրեւ գիտակից խմբապետներ, թէ յանձնառու ենք մեր պարտականութեան, նախանձախնդրութեամբ եւ հաւատարմութեամբ մեզի յանձնուած պարտականութիւնը լաւագոյնս կատարելու, բոլոր սերունդներու գալիք լաւագոյն դաստիարակութիւնը տալու համար»:

«Այս թող ըլլայ մեր այսօրուան ուխտին վերանորոգումը եւ վաղուան աշխատանքներուն մեր կամքը զօրացնող հիմնական նպատակակէտը»: Եղբ. Գապասագալեան իր խօսքը եզրափակեց հարց տալով, թէ՛ «երբ բաժնուինք պիտի գիտնանք որ մենք ո՛ւր եկանք եւ ինչե՞ր ունինք ընելիք»:



ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԱՍԸՆԹԱՅՔԸ

Եւրոպայի ցամաքամասի դասընթացքէն երկու շաբաթ ետք, 22 Յուլիսին, Հալեպի Փրանչիսքեաններու վանքին մէջ տեղի ունեցաւ խմբապետներու վերաորակաւորման եւ Վկայ-եալ կարգի ցամաքամասային երկրորդ դասընթացքը, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեանի, Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներու, կազմակերպիչ յանձնախումբի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի, Իրաքի, Քուէյթի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 25 քոյրերու եւ եղբայրներու:

Դասընթացքի բացման արարողութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան բարի գալուստ մաղթեց Միջին Արեւելքի գանազան երկիրներէն ժամանած քոյրերուն եւ եղբայրներուն: Ան ըսաւ, թէ անհերքելի իրականութիւն է, որ նման դասընթացքներ իրենց օգտաշատ ներդրումը, դրոշմը պիտի ունենան, մասնակիցներուն մտածելակերպը եւ գործնական կարողութիւնը պիտի զարգացնեն: Եղբայրը պատրաստակամութիւն յայտնեց հարթելու բոլոր խոչընդոտները, որպէսզի դասընթացքը ընթանայ հեզասահ եւ ծառայէ իր նպատակին: Ան զնահատեց մասնակից քոյրերուն եւ եղբայրներուն ներկայութիւնը, որոնք իրենց ժամերը տրամադրած են Հ.Մ.

Ը.Մ.ին՝ իրենց ազգային պարտականութիւնը կատարելու համար: Ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որ այս դասընթացքը կազմակերպեց Սուրիոյ մէջ, ինչպէս նաեւ մաղթեց որ մասնակցողները առաւելագոյն չափով օգտուին դասընթացքէն, որ վստահաբար իր ներդրումը պիտի ունենայ շրջաններու սկաուտական աշխատանքներու աշխուժացման վրայ: Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան եւ ըսաւ, թէ մենք ապահով կը զգանք ձեր ներկայութեամբ: Մենք ունինք երիտասարդ սերունդ մը, որ հազարաւոր մղոններ կտրած է: Սերունդ մը, որուն յանձնուած է երիտասարդութիւն, պատասխելութիւն, մանուկներ, որոնց դաստիարակութեան պատասխանատուները դուք էք: Վստահ ենք, աւելցուց ան-, որ յանձնառութիւնը ունիք ձեր շրջաններէն ներս աշխատելու եւ ունիք գիտակցութիւնը, թէ այս դասընթացքը աննախընթաց երեւոյթ է: Նման դասընթացքներ նախապէս տեղի չեն ունեցած: Պիտի մտածէք ըսելու համար, թէ արդեօք ինչո՞ւ այս դասընթացքը: Առհասարակ, շրջաններու մէջ դասընթացքներ տեղի կ'ունենային: Տեղ մը սկսած ենք փնտռել Հ.Մ.Ը.Մ.ի իսկական որակը, վստահ պիտի փոխանցուին ձեզի գիտելիքներ, որոնք նախապէս ստացած էք, սակայն անոնց տարբերակը պիտի տրուի ձեզի եւ միասին բոլորս բաժին պիտի ունենանք այս դասընթացքին յաջողութեան մէջ:

Դասընթացքին գործադիր մարմինը (Սուբիային եղբ. Աւօ Տէրվիչեան, քոյր Կասիա Կարապետեան, Լիբանանէն եղբ. Յակոբ Չալաքեան, Հայաստանէն եղբ. Ռոմանոս Պետրոսեան) կազմակերպիչ խմբապետական կազմի կողքին (եղբ. Վաչէ Նաճարեան, քոյրեր Թայլին Օրտողլեան, Սեդա Պէշլեան) դասընթացքին տեւողութեան փոխանցեց ճշդուած նիւթերը: Կատարուեցան նաեւ սկաուտական արարողութիւններ, կարգապահական վարժութիւններ: Ամէն օր մասնակցողներուն փոխանցուեցաւ օրուան պատգամը:

Դասընթացքին ընթացքին կատարուեցան գրոյցներ, կլոր սեղաններ, արծարծուեցան սկաուտութիւնը յուզող նիւթեր: Տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում՝ սկաուտութիւնը յառաջ տանելու նպատակով եւ աշխատանքները բարելաւելու առաջադրանքով, միշտ պահելով Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան սկզբունքները:

Դասընթացքին իրենց դասախօսութիւններով օգտակար դարձան՝ ազգային նիւթերով Աւօ Գաթրճեան, Ժիրայր Ռէյիսեան, կրօնական նիւթերով Տաթև Բհնյ. Միքայէլեան, Զարեհ Բհնյ. Շաքարեան, Մերոն Բհնյ. Աւետիսեան, Հոգեբանական նիւթով Ֆիմի Տէր Յակոբեան:

Նշենք, թէ երեկոները տեղի ունեցան խանդավառ երեկոներ:

Դասընթացքին աւարտին, մասնակցող քոյրերուն եւ եղբայրներուն փոխանցուեցան հաստատագիրներ:

Փակման արարողութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան իր խօսքին մէջ նշեց, որ միշտ հրաժեշտի պահը տխուր եղած է, սակայն տրամադրութիւնները՝ բարձր, որովհետեւ այս դասընթացքին ստացաք գիտելիքներ, ըլլան անոնք գործնական թէ տեսական, յառաջխաղացք արձանանգրեցիք եւ որակով քիչ մը բարձրացաք, սակայն աւելցուց ան, ձեր առաքելութիւնը հոս չի վերջանար: Ան թելադրեց, որ մասնակիցները շրջանները երթան եւ իրենց ստացած գիտելիքները փոխանցեն իրենց քոյրերուն ու եղբայրներուն:

Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք իրենց մասնակցութեամբ սատար հանդիսացան դասընթացքին յաջողութեան: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որ նման դասընթացքներու հիմը կը դնէ շրջաններէն ներս:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասազաբեան իր խօսքին մէջ ըսաւ. «Այս վայրկեանէն սկսեալ դասընթացքը կը դադրի աննախընթաց ըլլալէ, որովհետեւ պարտականութիւնը այլեւս ձեր ուսերուն է, մենք միութեան կարգախօսին համաձայն՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ի սկզբունքներով մեր կարելին ըրինք առաւելագոյնը տալու, սակայն դուք վերջակէտ մը կը դնէք, եթէ երբեք ձեր ստացածը աւելիով, բազմապատիկով չփոխանցէք ձեր կրտսեր եղբայրներուն, որովհետեւ ինչ որ կը տրուի միայն հոս չի վերջանար,



այդ բոլորին վրայ կ'ենթադրէ ինքնաշխատութիւն մը, որ ձեր պարտականութիւնն է, ձեր յանձնառութիւնն է, որ կատարուած է հոս, ձեր խոստումին ընդմէջէն:

«Մենք ձեր վրայ մեծ վստահութիւն ունինք: Ոչ մէկ ժամանակ կասկած կայ, սակայն կ'ենթադրէ որ ձեր հաւատքը գորացնէք, կամքը գորացնէք, որպէսզի կարողանաք լաւագոյնին հասնիլ, առաւելագոյնին հասնիլ», ըսաւ եղբ. Գապասազաբեան եւ յանուն Կեդրոնական Վարչութեան շնորհակարանք եւ շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ խմբապետական կազմին, որ իրապէս Յունուար ամիսէն սկսեալ ոչինչ խնայեց դասընթացքի յաջողութեան համար: Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուբիոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդին, որոնք ոչինչ խնայեցին դասընթացքին յաջողութեան համար: Ապա, իր խօսքը եզրափակելով, ան ըսաւ. «Յուսանք շրջաններու մէջ երես կը ձերմկցնէք, քանի ձեր շրջանները ձեզմէ ակնկալութիւններ ունին, հետեւաբար առաւելագոյն աշխատանքով եւ Հ.Մ.Ը.Մ.ի վեհ նշանաբանով գործելու տրամադրութեամբ ընթացէ՛ք միշտ յառաջ»:



Ժիրայր Ռէյիսեան դասախօսութեան պահուն:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՅԻՆ

Ամերիկեան ցամաքամասի դասընթացքին մասնակցեցան 55 խմբապետ-խմբապետուհիներ, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն՝ 27, Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանէն՝ 4, Գանատայէն՝ 8, Հարաւային Ամերիկայէն՝ 14, Աւստրալիայէն՝ 2: Դասընթացքը տեղի ունեցաւ 3-7 Սեպտեմբերին, Լոս Անձելըս, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Հ.Մ.Ը.Մ-ի սեփական բանակավայրը, Թեքոյա:

Դասընթացքին ծրագիրը իրագործելու համար, Կեդրոնական Վարչութեան հետ համախորհուրդ, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը իր շրջանէն նշանակեց գործադիր խմբապետական կազմ մը, որ բաղկացաւ եղբայրներ Հրայր Պոյաճեանէ, Արի Պոյաճեանէ, Սեւակ Կարապետեանէ, քոյրեր Մարի Քուչիքեանէ եւ Կարինէ Աւաննիսէ:

Դասընթացքին մասնակցողները, յատկապէս հեռաւոր շրջաններէ ժամանողները, առաջին օրը՝ 3 Սեպտեմբերին ունեցան շրբ-

ջապտոյտ մը: Անոնք այցելեցին հայկական կեդրոններ եւ քաղաքի տեսարժան վայրեր: Երեկոյեան անոնք բարձրացան Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական բանակավայրը, ուր կատարուեցան ծանօթացումներ եւ ներքին անհրաժեշտ դասաւորումներ: Յաջորդ առաւօտուն, դրօշակի արարողութեամբ տեղի



Միսաք Թորլաքեանի շիրիմին շուրջ:

ունեցաւ դասընթացքին պաշտօնական բացումը, ուր յաջորդաբար խօսքեր արտասանեցին գործադիր խմբապետական կազմի անունով եղբ. Հրայր Պոյաճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ եղբ. Փիէր Մանուկեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ եղբ. Գարրոս Սէֆէրեան: Եղբ. Պոյաճեան մասնակիցներուն յանձնարարեց աչալրջութեամբ հետեւիլ դասընթացքի գիտելիքներուն եւ իւրաքանչիւրը, իր պաշտօնին թելադրութեամբ, գործօն մասնակցութիւն բերել բոլոր աշխատանքներուն: Ապա, Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ եղբ. Փիէր Մանուկեան: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ իր գոհունակութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որ այս աշխատանքին կազմակերպումը վստահեցաւ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին: Տեղին է յիշել, որ եղբ. Փիէր իր պաշտօնին բերումով դասընթացքին ամբողջ տեւողութեան մնաց բանակավայր եւ անթերի բծախնդրութեամբ հետեւեցաւ շրջանին վստահուած բոլոր աշխատանքներուն:

Բացման արարողութեան վերջին բաժնով խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարրոս Սէֆէրեան: Ան անդրադարձաւ տեղի ունենալիք դասընթացքի աշխատանքներուն եւ մասնակցողները հրաւիրեց իրենց ազգային եւ միութենական առաքելութեան հաւատարիմ՝ իրենց կապուած ակնկալութիւններուն համաձայն, գիտակցօրէն հետեւելու դասընթացքի բոլոր նիւթերուն:

Յաջորդական երեք օրերու ընթացքին, խտացուած յայտագրով, մերթ ընդ մերթ դադարով, մասնակցողներուն փոխանցուեցան անհրաժեշտ գիտելիքներ, որոնք կը պարփակեն յաւելեալ մանրամասնութիւններ եւ տեղեկութիւններ իրենց կիրարկած պաշտօններուն առնչութեամբ:

Գիտելիքները փոխանցուեցան Կեդրոնական Վարչութեան անդամներու, կղերականներու, Շրջանային Սկաուտական Խորհուրդի, անցեալի վաստակաշատ խմբապետներու եւ դաղութէն ներս նիւթերու մասնագէտ անձնաւորութիւններու կողմէ:

Դասընթացքին վերջին օրը տեղի ունեցաւ փակման արարողութիւն, որուն ներկայ գտնուեցան, դասընթացքին հետեւող Կեդրոնական Վարչութեան անդամներու կողքին, Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան, կարգ մը մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներ եւ նախկին խմբապետ-խմբապետուհիներ:

Դրօշակի արարողութեանէն առաջ տեղի ունեցաւ հաստատագիրներու յանձնում, յուշանուէրներու եւ խօսքերու փոխանցում: Գործադիր խմբապետական կազմի անունով եղբ. Հրայր Պոյաճեան շնորհակալութիւն յայտնեց Կեդրոնական Վարչութեան, որ այս կազմին վստահուած էր դասընթացքի գործադրութեան աշխատանքները եւ իրագործումը, յուսալով որ ան արդիւնաւորութիւն շրջաններու մէջ: Շրջանային Վարչութեան անունով եղբ. Փիէր Մանուկեան գոհունակութիւն յայտնեց կատարուած իրագործումին համար, մաղթելով որ Հ.Մ.Ը.Մ.ի Թեքոյայի բանակատեղին առիթը ունենայ



Դասընթացքին մասնակիցները Սեօ Եղեռնի Մոնթեպելլոյի յուշարձանին առջեւ:

սկաուտական այլ ձեռնարկներ եւս հիւրընկալելու: Կեդրոնական Վարչութեան անունով խօսքը փոխանցեց եղբ. Կարպիս Գապասազալեան, որ առաջին հերթին մասնակցողներուն թելադրեց իրենց յանձնառութեանց եւ պատասխանատուութեանց գիտակից՝ յաւելեալ ճիգով եւ ինքնաշխատութեամբ վարեն իրենց պաշտօնները, տրուած ըլլալով որ իրենց վստահուած է սերունդներու առողջ դաստիարակութիւնը՝ հոգեկան, մտային, բարոյական եւ ֆիզիքական մարզերու մէջ եւ վերանորոգ ուխտով վերադառնալու իրենց շրջանները: Եղբ. Գապասազալեան գնահատեց Շրջանային Վարչութիւնն ու Սկաուտական Խորհուրդը, որոնք հիւրընկալեցին ձեռնարկը եւ ոչինչ խնայեցին անոր յաջողութեան համար:



Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան դասախօսութեան պահուն:



Եղբ. Կարպիս Գապրիսյանի դասախօսութեան պահուն:



Եղբայրը գնահատեց նաև գործադիր խմբապետական կազմի անդամները, որոնք տուին իրենց առաւելագոյնը:

Դասընթացքին պաշտօնական փակումը կատարուեցաւ դրօշակի արարողութեամբ եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Յաջորդ առաւօտուն, մասնակցողները բոլորուեցան բանակավայրին մէջ նոր ցանուած ծառատունկի մը շուրջ եւ իբր յիշատակ՝ արձանագրութիւն պահեցին դասընթացքին մասնակցող շրջաններուն անունով: Ապա, «Յտեսութիւն» երգով մեկնեցան բանակատեղիէն:

Դասընթացքը իր աւարտին կրնար հասնիլ ազգային պարտաւորութեամբ:

Խմբապետական կազմերը Կեդրոնական Վարչութեան անդամներու առաջնորդութեամբ ուղղուեցան Մոնթեպելլօ, Հայկական Ցեղասպանութեան նուիրած յուշակոթող, ուր իրենց կը սպասէր Նարեկ Քհչոյ-Փեհլիւանեան: Քահանայ հայրը հակիրճ խօսքով անդրադարձաւ մեր պատմութեան սեւ էջերուն, յուշարձանի իմաստին եւ անոր թելադրութեան, ապա ան կատարեց հոգեհանգստեան արարողութիւն, որմէ ետք Կեդրոնական Վարչութեան անդամները Հ.Մ.-Ը.Մ.ի սկաւտտութեան անունով ծաղկեպսակ մը զետեղեցին յուշարձանին առջեւ: Ներկաները բարձ-

րահնչին երգեցին «Յառաջ նահատակ» քայլերգը, ապա մեկնեցան գերեզմանատուն, այցելելու ազգային հերոս Միսաք Թորլաքեանի շիրիմը: Դամբանաքարին շուրջ խմբապետութեան անդամները լուռ հետեւեցան եղբ. Արի Պոյաճեանին, որ ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Թորլաքեանի նուիրագործումները եւ ազգային պարտաւորութեան կոչին սրբագործումը: Կեդրոնական Վարչութեան անդամները ծաղկեփունջ մը զետեղեցին Միսաք Թորլաքեանի շիրմաքարին



Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը իր յուշանուէրը կը յանձնէ Արեւմտեան Ս. Նահանգներու Շրջ. Վարչութեան:



վրայ, որմէ ետք Նարեկ Քհնյ. երկինք բարձրացուց «Ի վերին Երուսաղէմ» աղօթքը, ապա բոլորը երգեցին «Յառաջ նահատակ» եւ «Վէրքերով լի»:

Վերադառնալով Շրջանային Վարչութեան կեդրոն, խմբապետները հրաժեշտ տուին իրարու՝ խոստանալով ամէնուրեք աշխոյժ եռանդով շարունակել սկաուտական իրենց աշխատանքները:

Դասընթացքի աշխատանքներու աւարտին, հիւրաբար շրջան ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Կարպիս Գապասագայեան եւ Գարլոս Սէֆէրեան, ընկերակցութեամբ եղբ. Գօգօ Պալեանի (շրջանէն), Շրջանային Վարչութեան առաջնորդութեամբ, 2 Սեպտեմբերի երեկոյեան այցելեցին Փասատինայի ընդարձակ ակումբը, որ կառուցուած է մասնաճիւղի անձնուէր անդամներուն ճիգերով եւ զոհողութիւններով:

Յաջորդ առաւօտուն, Կեդրոնական Վարչութեան երեք եղբայրները այցելեցին Ազգային Առաջնորդարան, ուր մտերմիկ հանդիպում մը ունեցան Առաջնորդ Մուշեղ Եպս. Մարտիրոսեանի հետ: Հանդիպման ընթացքին խօսուեցաւ դադուժներէ ներս Հ.Մ.Ը.Մ.ի տարած աշխատանքներուն մասին, ապա տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Սրբազան Հայրը Կեդրոնական Վարչութեան անդամները առաջնորդեց Առաջնորդարանին յարակից մասերը, ուր յիշատակի նկարներէ ետք՝ անոնք հրաժեշտ տուին Սրբազան Հօր:

Նոյն օրը, կէսօրէ ետք, Կեդրոնական Վարչութեան անդամները, Շրջանային Վարչութեան անդամներու ընկերակցութեամբ, այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի եռուն կեդրոնը, ուր դիմաւորուեցան մասնաճիւղի վարչութեան անդամներուն կողմէ: Բարի գալուստի խօսքերէն ետք, մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրա-



համեանի առաջնորդութեամբ, Կեդրոնական Վարչութեան եղբայրները շրջեցան պարծանք առթող հին ու նոր հսկայատարած կեդրոնները: Տեղին է յիշել, որ այս այցելութեան միացան Հարաւային Ամերիկայի խմբապետները, որոնք իրենց երանգը տուին այս այցելութեան: Կեդրոնական Վարչութեան անդամները նորանոր յաջողութեան մաղթանքներով հրաժեշտ առին մասնաճիւղի վարչութեան անդամներէն:

Նոյն գիշեր այցելութիւն մը տրուեցաւ Շրջանային Վարչութեան նստավայր: Մտերմիկ հանդիպումի մը ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը առ ի գնահատանք Շրջանային Վարչութեան ընձեռած հիւրընկալման, յանձնեց յուշանուէր մը:

9 Սեպտեմբերի երեկոյեան, Կեդրոնական Վարչութեան երեք եղբայրները այցելեցին Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրոյի գրասենեակը, հանդիպում մը ունեցան Բիւրոյի անդամ Վիգէն Յովսէփեանի հետ: Խօսակցութեան առանցքը դարձան Հայաստանի ներկայ իրադարձութիւնները՝ հայ-թուրք յարաբերութիւններու ընթացքը եւ Հ.Մ.Ը.Մ.ի գաղութային աշխատանքները:

Նոյն գիշեր տեղի ունեցաւ ընթրիքի երեկոյ մը՝ Հինտոյեաններու բնակարանը, ուր ներկայ էին Կեդրոնական Վարչութեան, Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներ, շրջանի նախկին եւ գործօն կարգ մը խմբապետ-խմբապետուհիներ, ինչպէս նաեւ՝ Հարաւային Ամերիկայի խմբապետական կազմը:

Հ.Մ.Ը.Մ.ի վայել մտերմիկ մթնոլորտի մէջ, բոլորին կողմէ արտասանուեցան երախտագիտական զգացումներով լի բաժակաճառեր եւ զնահատումներ:

Ներկաները իրարու հրաժեշտ տուին ամրակուռ կամքով եւ վերանորոգ ուխտով շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ի յաւերժագրնաց երթը:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



1940ական տարիներ. Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ժողովի մասնակիցներու յիշատակի նկար:

Ա. շարք նստած, ծախեն ք՝ Յովհաննէս Շահինեան, Վահրամ Կիրճեան, Լուստեր Մասպանաճեան, Սիմոն Թերճանեան:

Բ. շարք, ոտքի՝ Մանուկ Տօվլէթեան, Արապեան, Յարութիւն Պազարպաշեան, , , Կարապետ Աղճեան:

Գ. շարք, ոտքի՝ Վահան Թորոսեան, Ատրուշան Իւլիսայեան, Պօղոս Շահինեան, Եղիշէ Մանուկեան:

փափաքեցաւ իր ալ դուզնակեայ մասնակցութիւնը բերել հանգանակութեան գործին: Մեր այս պարտականութեան կատարումը նկատելով որ կախում ունի հանգանակիչ Կեդրոնական Մարմնի բարենհաճ արտօնութենէն, ջերմապէս պիտի խնդրէինք որ մեզի արտօնէիք կատարելու մեր պարտականութիւնը:

«Մեր կատարելիք հանգանակութիւնը պիտի կայանայ միայն ու միայն հին կամ նոր հանդերձեղէններու շուրջ, զորս պիտի հաւաքուին հայ ընտանիքներէն»:

Հանգանակիչ Կեդրոնական Մարմնի մերժումի պատճառաբանութիւնը կը կարդանք վարչութեան 27 Դեկտեմբեր 1926 թուակիր նամակին մէջ:

«Վարչութիւնս հակառակ իր երկար սպասումներուն, քանի մը օր

առաջ միայն պատիւը ունեցաւ կարդալու Ձեր Դեկտեմբեր թուակիրը, որով կը մերժէք մեր խնդրանքը, նկատի ունենալով որ հանդերձեղէնի նման հանգանակութիւն մը կարեւոր արդիւնք պիտի չտայ տեղոյս հայութեան մէջ եւ թէ պիտի չարժէ ահագին ծախսերը կատարել անոր փոխադրութեան համար:

«Ժողովս վերջին նիստին այս կարգադրութիւնը ցատկ իմանալով հանդերձ, որոշեց կրկին աշխատիլ եւ ջանալ ի սպաս դնել իր համեստ ուժերը այն հանգանակութեան ձեւին վրայ, զոր պիտի կայանայ Ս. Ծնունդին, տօնական օրերու առիթով քրքարտաբաշխում կատարելով քաղաքին թէ քէմքի եկեղեցիներուն առջեւ լիայոյս ենք որ այսպէսով պիտի կարենանք կլորիկ գումար մը ձեռք ձգել եւ յանձնել Պատուարժան Մարմինիդ:

«Յոյսով ենք որ մեր այս խնդրանքը նկատի կ'առնէք եւ փութով կը պատասխանէք, իսկոյն գործի ձեռնարկելու համար»:

Հ.Մ.Ը.Մ.ի կեանքի սկզբնական շրջանի մտահոգութիւններն ու դժուարութիւնները Պէյրութ թէ Հայկապ նոյնն են:

«Նիւթապէս անձուկ վիճակ զուրկ ակումբէ, դաշտէ, հաւաքավայրէ. տղաքը կ'աշխատին, կը դիմեն, կ'աղաչեն, առանց յուսահատելու կը յարատեւեն ժողովուրդին ուղղուած կոչներն ու հրաւերները կը հանդիպին անտարբերութեան: Յուսահատութիւն, երբեք: Մեր մարզարանն է որեւէ բաց դաշտ, հաւաքատեղին որեւէ անկիւն» - (Հայկապ, 25ամեակի յայտագիր):

Այս դժուարութիւնները դիմակայելու խոր գիտակցու-

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, ԺԳ. ՄԱՍ

1 926ին, Հայաստանի աղէտին, Պէյրութի մէջ կազմուած էր Հանգանակիչ Կեդրոնական Մարմին մը: Հ.Մ.Ը.Մ.ը, իբրեւ ազգանուէր երիտասարդ կազմակերպութիւն, անկասկած պիտի չզլանար իր պատրաստակամութիւնը ծառայելու հեռուոր եղբայրներուն համար, ուստի, կը դիմէ Հանգանակիչ Կեդրոնական Մարմինին:

«Վարչութիւնս իր վերջին նիստին նկատի առնելով Հայաստանի աղէտնալներուն ներկայ ողբերգական վիճակը,

Թեամբ եւ հաւատքով տողորուած, վճռուած էր Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութիւնը ժողովրդականացնել Սուբիոյ եւ Լիրանանի հոծ հայութեան մէջ եւ անոր դրօշը տանիլ քաղաքէ քաղաք, մինչեւ Սուբիոյ հեռաւոր անկիւնները:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի վարչութիւնը, ընտրուած՝ 21 Դեկտեմբեր 1925ին, գործի կը սկսի երբ միութեան գանձը բաց ունէր: Ան նոր Տարին կը դիմաւորէ անդամներու մտերմիկ հանդիպումով Ազգ. մանկապարտէզի սրահին մէջ, ու իր ուսերուն վրայ ծանրացող բացը գոցելու համար, Առաջնորդ Հօր արտօնութեամբ ու հովանաւորութեամբ հրապարակ կ'իջնէ պատուոյ անդամներ արձանագրելու: Այս ձեռնարկին առնչութեամբ Արտաւազ Մ. Վ. Միւրմէեանին կը գրուի հետեւեալ նամակը.

«Շայ երիտասարդութիւնը ֆիզիքայէս ու բարոյապէս բարձրացնելու ամենալաւ ու միակ ազդակը եղող մարմնամարզական միութիւնս, որ իր հիմք տարուան շրջանը կը բռնորէ «Շայ երիտասարդաց Համազասպ Ակումբ»ի անուան տակ, նիւթապէս ամենադժուարին պայմաններու տակ, իր գոյութիւնը կրցած է պահել, մարզելով կրթած է հարիւրաւոր պատանհներ ու երիտասարդներ:

«Այս շինիչ ու օգտակար ձեռնարկէն թելադրուող տեղացի օտար երիտասարդ խմբակներ շատ շուտ որդեգրեցին մեր ծրագիրը եւ հետեւեցան մեր հետքերուն:

«Անդամներուն շարքերը հետզհետէ խտանալով եւ աւելի զօրեղ թափ ու կորով ստեղծելու միակ նպատակաւ, վար-



Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Գամուտի պասքեթպոլի տղոց...

չութիւնս, հիմնուելով իր Ընդհ. ժողովի որոշումներուն վրայ, «Շայ երիտ. Համազասպ Ակումբ»ին տեղ Հ.Մ.Ը.Մ., ՀԱԾ ՄԱՐՄԱԿՐԹԱԿԼԱԸ ԸՆԴՇՄՈՒՐ ՄԻՈՒԹԵԼԱԸ հիմնաքարը դրաւ ասկէ քանի մը ամիս առաջ, որով ամէն մէկ կողմ ցրուած զանազան խումբերը ի մի համախմբեց եւ մէկ ձաւատ ստեղծելու աշխատանքը ստեղծեց:

«Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական ծրագրին ընդառաջ երթալ կարենալու համար, անոր կը պակսի նիւթական միջոց, հետեւաբար որոշեց բացառիկ հանգանակութիւն մը ընել իր անդամներուն մէջ եւ մասնաւորապէս բանալ պատուոյ անդամակցութեան ցանկ մը, որուն պատուոյ նախագահութիւնը Ընդհ. ժողովս Զերդ. Գերապատութիւնը որոշած ըլլալով, մեծ հաւատք ունիմք որ յառաջապահը պիտի ըլլայիք սատարելու այս բարձր գործին:



...եւ աղջկանց խումբեր:

«1922 տարուան շրջանին, Առաջնորդարանին բարի թելադրանքին վրայ, մարմնամարզարան մը գնելու նպատակաւ, ֆոնտ մը բացուած էր: Միութիւնս իր սարքած դաշտահանդէսին, երեկոյթ եւ զանազան խաղերէն ձեռք անցուցած հասոյթին հարիւրին քսանը յատկացուցած ըլլալով վերոյիշեալ գործին, մաս մը գումար Առաջնորդարանին յանձնուած է եւ մինչեւ այսօր ի պահ դրուած կը մնայ, նոյն գումարը վարչութեանս վերադարձնելու արտօնութիւնը տալով, այդ համեստ գումարով անհրաժեշտ գործիքներ կը գնուին օգտագործելու մօտիկ ժամանակին միութեան առաջին երեկոյթին եւ հետզհետէ կազմակերպուելիք դաշտահանդէսներուն:

«Լիայոյս ենք, որ սիրով պիտի ընդունիք առաջադրեալ պատուոյ նախագահութիւնը եւ Ձեր բարոյական օժանդակութիւնը ի հանդէս պիտի բերէ յօգուտ հայ երիտասարդին եւ հայ ուժին»:

Վարչութիւնը վերոգրեալ դժուարին խնդիրներու կարգին, օրակարգի վրայ ունէր այլ հարցեր եւս, բոլորն ալ հարթուելու կարօտ: Այս խնդիրներէն գլխաւորը քաղաքին մէջ գոյութիւն ունեցող խմբակցութիւններուն հետ գլուխ գլխի հաւաքուիլն ու միջ-ակմբային խաղերու ծրագիրով սխտեմատիկ հանդիպումներ ունենալն էր, որը շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ին, դրական արդիւնքով Ֆուլթայոյի խաղերու շարքը կը սկսի խանդավառելով երիտասարդութիւնը, զայն մէկտեղելով առողջ միջնորդութիւն մէջ:

Քաղաքական պայմանները Սուրիոյ մէջ 1925ին աւելի նպաստաւոր կերպարանք ստանալով, վարչութիւնը կը փութայ իր դիմումագիրը ներկայացնելու պատկան իշխանութեան առ ի վաւերացում:

Անդամագրութիւնը օրինաւոր ու պաշտօնական դարձնելու մտօք, կը սպազրուին առաջարկ անդամագրութեան թուղթերը եւ ենթակայէն կը պահանջուի ծնողքին հաւանութիւնը եւ ծանօթներու վկայութիւն:

Նոր Տարիի հաւաքութիւնն էր, վարչութիւնը կը ծրագրէ Բարեկենդանի առթիւ կազմակերպել ցերեկոյթ մը: Մինչ այդ վարչական ժողովներէն զատ կը գումարուին խմբագետական եւ ընդհանուր ժողովներ:

Վարչութեան ձեռնարկը եղող ցերեկոյթը՝ մարզական եւ գեղարուեստական, տեղի կ'ունենայ 14 Մարտ 1926ին, «Օրիան-թալ» շարժապատկերի սրահին մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Արտաւազդ Մ. Վարդապետին:

Այս ցերեկոյթին մարզական այլ խաղերու կարգին կ'ըլլան կուփամարտի եւ հեծելանիւի փորձեր բեմին վրայ: Այս ճիւղերուն մէջ յաջողութիւն կ'արձանագրեն Արսէն Փողարեան եւ Լեւոն Թոքաթլեան:

Այս ձեռնարկէն ետք, վարչութիւնը ընթացք տալով միջ-ակմբային մրցումներուն իր բերելիք բաժնին, կը ծրագրէ Զատիկուան առիթով ժողովուրդին ցրուել թուուցիկներ, սկստական պատկերներով եւ այս շարժումին շուրջ հակիրճ բացատրութիւններով:

Աւելին: Սկստական այս կենսական շարժումը հաստատ հիմերու վրայ դնելու համար, վարչութիւնը մեծ զոհողութեան գնով Լեւոն Աբգարեանը իբրեւ մարզիչ պաշտօնի կը կոչէ: Եւ Ապրիլ 21, 1926ի վարչական նիստին կ'որոշուի սկստական յանձնախումբ մը կազմել: Այս յանձնախումբին վարչութեան կողմէ կը մասնակցին Լեւոն Պապիկեան եւ Տիգրան Աղճայեան: Յանձնախումբին մնացեալ անդամները կը կազմեն բոլոր խմբագետները եւ Աբգարեան:

(Շար. 13)

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.Ը ԵՂԱԲԻ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՈՉ ԹԷ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՆԸ

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ' ԸՍԷ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ԻՐԱԽԱՐԱՐ ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՆՈՅԵԱՆ



Եղբ. Անդրանիկ, Հ.Մ.Ը.Մ.Ի Աւստրալիոյ աւագ սերունդի անդամներէն մէկը ըլլալով, ի՞նչ կը յիշէք ձեր գործունէութեան առաջին տարիներէն:

- 1965ին, երբ Աւստրալիա հաստատուեցանք, մեր սերունդին առաջին գործերէն մէկը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրութիւնը: Կը յիշեմ, Մարտ 1965ին, 40 հոգիով գումարեցինք մեր հիմնադիր ժողովը եւ ընտրեցինք մեր առաջին վարչութիւնը:

Որո՞նք կային այդ վարչութեան մէջ:

- Արսէն Հէքիմեանը կար, իբրեւ ատենապետ: Ան ալ մեզի պէս Սուրիայէն էր: Մենք Հայկ պէն էինք, ինք՝ Հոմսէն: Պերճ Մոմճեանը կար: Կային նաեւ Յակոբ Քորթեանը, Յովհաննէս Մարտոյեանը, Ճորճ Արոշեանը, Զաւէն Սարգիսեանը եւ Սիւսան Քիւրտոյեանը:

Հ.Մ.Ը.Մ.ին հետ միաժամանակ հիմնուեցաւ Համազգայինի Սիտնիի մասնաճիւղը: Հ.Մ.Ը.Մ. իր գործունէութիւնը ըսկըսաւ Փութպոլի խումբով, յետոյ կազմուեցաւ պասքէթպոլի խումբ եւ յառաջացաւ սկաուտական շարժում:

Նշեցիք, թէ Աւստրալիա եկած էք Հայկ պէն: Ի՞նչ յիշատակներ ունիք Հայկ պէն:

- Ես փոքր տարիքիս Հ.Մ.Ը.Մ.ական եղած եմ Հայկ պէն մէջ: Նախ՝ գայլիկ, սկաուտ, ապա՝ մարզիկ: Սկաուտութեան մէջ, եղբ. Սեդրակը եղած է խմբապետս: Դժբախտաբար մականունը չեմ յիշեր: Մաս կազմած եմ «Շիրակ» պասքէթպոլի խումբին: Երբ Սուրիա-Եգիպտոս միութիւնը եղաւ, ըսկաուտական շարժումներու փոխադարձ

ՇԱՆՕԹԱՑՄԱՆ ԱՆԴԱՍԱՔԱՐՏ

Եղբ. Անդրանիկ Բանոյեան ծնած է 1942ին, Դալէպ: Փոքր տարիքէն ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն: Եղած է նաեւ մարզական խումբերու անդամ: Կիրարկած է Ֆութպոլ, ապա՝ պասքէթպոլ: Մաս կազմած է «Շիրակ» պասքէթպոլի խումբին:

1965ին Սիտնի փոխադրուելով, եղբ. Բանոյեան միութենական իր գործունէութիւնը շարունակած է Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի շարքերուն մէջ, որուն վարչութեան մաս կազմած է 15 տարի: Այնուհետեւ, ան չորս շրջան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան անդամ:

Եղբ. Բանոյեան 1986էն ի վեր պասքէթպոլի իրաւարար է: Ան Նիւ Սաութ Ուելզ նահանգի պասքէթպոլի փոխտանական մրցումներուն իրաւարարութիւնը կը կատարէ: 2007ին մասնակցած է համահայկական Դ. մարզախաղերուն, իբրեւ պասքէթպոլի իրաւարար: 2009ի ամրան, ան եղած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրոյ մարզախաղերու պասքէթպոլի գլխաւոր իրաւարար:

1990ին, եղբ. Անդրանիկի եւ եղբորը՝ Բենիամին Բանոյեանի բարերարութեամբ, կառուցուած է Հ.Մ.Ը.Մ.ի արեւմտեան Սիտնիի Փէյրփիլիպի «Նաւասարդ» մասնաճիւղին ակումբը՝ «Հայ Մշակութային Բանոյեան Կեդրոն»ը:

Եղբ. Բանոյեան ամուսնացած է եւ ունի երկու դուստր, որոնք իրենց հօրը օրինակով մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն:



այցելութիւններ կատարուեցան: Սուրիայէն 70 սկառտներ Եգիպտոս գացին եւ՝ հակառակը: Եղիպտոս գացողներուն մէջ կային 4 սկառտներ, որոնցմէ մէկը ես էի: Հ.Մ.Լ.Մ.ի պարտէզը այդ տարիներուն մեր տունն էր: Մենք հոն մեծցանք: Հ.Մ.Լ.Մ.ը եղաւ մեր առաջին եւ ոչ թէ երկրորդ տունը: Միջ-մասնաճիւղային խաղերու օրերուն, մենք շատ ուշ տուն կ'երթայինք եւ անոր համար ալ մեր ծնողներէն ծեծ կ'ուռէինք, բայց մեր գիտցածէն ալ ետ չէինք մնար: Հ.Մ.Լ.Մ.ը մեր արեան մէջ էր: Մինչեւ հիմա այդպէս է: Հայրս Հ.Մ.Լ.Մ.ական էր: Ես ու տիկինս Հ.Մ.Լ.Մ.ական ենք: Տիկինս ներկայիս Շրջանային Վարչութեան քարտուղարն է: Երկու աղջիկներս ալ Հ.Մ.Լ.Մ.ական են: Աստուած ուզէ, թոռներս ալ նոյն ճամբով պիտի ընթանան:

Ձեր անունը առաւելարար կապուած է իրաւարարութեան: Ի՞նչպէս դարձած էք իրաւարար:

- Սկիզբը ֆուլթպոլ կը խաղայի: Երբ վիրաւորուեցայ՝ սկսայ պասքեթպոլ խաղալ: Շրջան մը կրտսերներու խումբ մարզեցի: Յետոյ սկսայ իրաւարարութեան: 1986էն ի վեր նահանգային մակարդակի իրաւարար եմ: Հ.Մ.Լ.Մ.ի միջ-մասնաճիւղային խաղերուն չեմ սուլեր, որովհետեւ իրաւարարներու ընդհանուր պատասխանատուութիւնը կը ստանձնեմ: Կը մասնակցիմ սակայն ախոյեանական մրցումներու եւ իրաւարարութենէ շահած գումարս ամբողջութեամբ կը նուիրեմ բարեսիրական միութիւններու: Ես նիւթականի համար

մրցում չեմ վարեր, այլ՝ առողջութիւնս պահելու համար: Իրաւարարութիւնը ինծի համար նախասիրութիւն է: Հիմնական գործս շինարարութիւն է:

Շինարարութեամբ եւս օգնած էք Հ.Մ.Լ.Մ.ին, այդպէս չէ՞:

- Այո, ես ու եղբայրս՝ Բենիամինը 1990ին մեր բարերարութեամբ շինեցինք արեւմտեան Սիտնիի «Նաւասարդ» մասնաճիւղին ակումբը, որ այսօր բոլորին կողմէ կը գործածուի եւ կը կոչուի «Հայ Մշակութային Բանոյեան Կեդրոն»:

Վերադառնանք իրաւարարութեան: Նոր սերունդին կը թեյադրէ՞ք իրաւարար դառնալ:

- Կը քաջալերեմ որ երիտասարդներ իրաւարար դառնան, սակայն կը գգուչացնեմ նաեւ, որ ատիկա իրենց ապագային հաշուոյն չըլլայ: Նախապատուութիւնը պէտք է տալ դասերուն, համալսարանին եւ յետոյ՝ իրաւարարութեան:

Ըստ ձեզի, որո՞նք են տիպար իրաւարարի մը յատկանիշները:

- Ըսեմ, որ ես նաեւ խումբի մարզիչ եմ: Այդ մէկը շատ կ'օգնէ իրաւարարի մը: Իրաւարար մը պէտք է կարենայ խաղը կարգալ, հասկնալ: Ան պէտք է խաղացողներուն հետ լաւ ըլլայ, որպէսզի խաղացողները զայն յարգեն եւ ինքն ալ խաղը «բռնէ»: Այլապէս կռիւ կ'ըլլայ եւ միջոյրտը կ'աւրուի: Իրաւարար մը շատ լաւ պէտք է ըլլայ բոլորին հետ:

Made from one single slice of natural Australian opal

Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com

ԼԵՎԱՄ-Ի ՆՈՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՏՂՈՑ ԽՈՍՏԱՄՆԱԿԼԻՑ ԽՈՒՄԲԸ

Յրայր Տիշչեքեճեան ՊԵՅՐՈՒԹ

ԼԵՎԱՄ-ը (Լիբանանահայ Երկրորդական Վարժարաններու Աշակերտական Մարզախաղերը) հիմնուած է 1967ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյ-րուսի մասնաճիւղին կողմէ, նպատակ ունենալով զարկ տալ մարզանքի եւ միջ-դպրոցական մարզախաղերու զարգացման: 1969ին, ԼԵՎԱՄ-ի կազմակերպումը կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը եւ 40 տարի շարունակ ԼԵՎԱՄ-ի ճամբով խոստամնայից մարզիկներ կը հասցընէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մարզական ներկայացուցչական խումբերուն:

ԼԵՎԱՄ-ի ճամբով յայտնաբերուած մարզիկներէն կ'արժէ յիշել Յովսէփ Լոշխաճեանը, Լարա Քէչէպաշեանը, Ժագ Նալպանտեանը, Վարդուկ Մարգարեանը եւ ուրիշներ:

ԼԵՎԱՄ-ի խաղերուն իրենց մասնակցութիւնը կը բերեն լիբանանահայ մեծ թիւով վարժարաններու աշակերտներ: Խաղերու աւարտին կ'ընտրուին լաւագոյն մարզիկները եւ կը հրաւիրուին մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական զանազան խումբերուն՝ աթլէթ, փինկ-փոնկ, պասքեթպոլ, ֆութպոլ եւ այլն:

2007-2008 տարեշրջանի աւարտին, ԼԵՎԱՄ ունեցաւ նորութիւն մը, երբ ստեղծեց պասքեթպոլի իր հաւաքական կազմը՝ մասնակցելու համար լիբանանեան համալսարաններու կողմէ կազմակերպուած լիբանանեան վարժարաններու մարզախաղերուն, որոնք տեղի կ'ունենան տարեկան դրութեամբ: Նոյն տարեշրջանին, խումբը իր մասնակցութիւնը բերաւ Լիբանանեան Ամերիկեան Համալսարանի (LAU) պասքեթպոլի մրցաշարքին, արձանագրելով գոհացուցիչ արդիւնքներ եւ խոստանալով շատ աւելին՝ յառաջիկայ մրցաշարքերուն:



Այսպէս, ԼԵՎԱՄ-ի պասքեթպոլի առաջին հաւաքականին մաս կազմեցին Սեւակ Քէթէնճեան, Ռազմիկ Պոյաճեան, Հայկ Խաչերեան, Նազօ Կէտիկեան, Շանթ Արամալեան, Շիրազ Տէր Մովսէսեան, Հրակ Պէքարեան, Խաթակ Կէօքճեան, Հրակ Գարագաշեան, Պերճ Քերթէշեան, Սերժ Վարդանեան, Վահէ Միթիլեան, Յակոբ Լեհիմճեան, Դանիէլ Պաղտատեան եւ էլի Մալք: Մարզիկները եկան Ազգային Եղիշ Մանուկեան Վարժարանէն, Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանէն, Համազգայինի Մեղանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանէն, Սրբ. Հռիփսիմեանց Վարժարանէն եւ Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանէն:



2008-2009 տարեշրջանի աւարտին կազմուեցաւ ԼԵՎԱՄ-ի պասքեթպոլի երկրորդ հաւաքականը, որ շուտով կը ըսկըսի իր գործունէութեան:

2008ի կէսերէն մինչեւ այսօր ԼԵՎԱՄ-ի հաւաքականը կտրած է արդէն աւելի քան մէկ տարուան ճամբայ: Խումբը կատարած է բարեկամական շարք մը խաղեր, արձանագրելով պատուաբեր արդիւնքներ: Խումբը մասնակցած է նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրր մարզախաղե-



րուն, Հայաստան, ներկայացնելով Լիբանանը:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրղ մարզախաղերուն մասնակցութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ ԼԵՎԱՄ-ի խումբին համար: Այս նպատակով եւ խաղերուն լաւ նախապատրաստութիւնը համար, խումբը եւօրեայ բանակում մը կատարեց Այնճարի մէջ, ուր բարեկամական մրցումներ կատարեց Չահլէի «Անիպալ» խումբի կրտսերներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի խումբին դէմ:

Հայաստանի մէջ, խումբը մասնակցեցաւ պասքեթպոլի երէց տղոց մրցումներուն եւ ինկաւ բաւական դժուար խմբակի մը մէջ: Այնուամենայնիւ, ան յաջողեցաւ յաղթել Աղեքսանդրիոյ եւ Աւստրալիոյ խումբերուն եւ պարտութիւններ կրեց մրցաշարքի խոյեան Արեւմտեան Մ. Նահանգներու խումբէն եւ Գանատայէն:

Ամբողջ մրցաշարքի ընթացքին խումբը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ականի մարզավայել կեցուածք եւ բարձր պահեց միութեան եւ Լիբանանի անունը: Պաշտօնական մրցումներու առընթեր, խումբի անդամները միասնաբար անցուցին մտերմիկ ու խանդավառ ժամանակ: Միաժամանակ, անոնք չմոռցան իրենց ազգային պարտականութիւնը կատարելու: Անոնք այցելեցին Մեծ Եղեռնի Ծիծեռնակաբերդի յուշահամա-

լիր, Սարգարապատի յուշակոթող, Հ.Յ.Դ. թանգարան, Եռարլուրի նահատակաց պան-թէոն եւ իրենց յարգանքի տուրքը ընծայեցին անցեալի ու ներկայի մեր բոլոր նահատակներուն: Անոնք նաեւ այցելութիւններ տուին էջմիածին, Ս. Գայիանէ եկեղեցի, Օշական, Ապարան (Դրոյի յուշարձան) եւ Ամբերդ:

Մարզիկները Հայաստանէն վերադարձան անմոռանալի յիշատակներով, Հ.Մ.Ը.Մ.ական եւ ազգային ապրումներով

with the complements of

Restaurant Al-Mayass

«ՉԵՄՓԻՆԵՔ ԼԻԿ»Ը ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ



Գէորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

1 955-1956 տարեշրջանին կը սկսէր այդ օրերուն Եւրոպայի ֆուտպոլի ախոյեաններու ախոյեանութեան առաջին մրցաշարքը: Օրին, մրցաշարքին մասնակցութեան պայմանները կը տարբերէին այսօրուան «Չեմփիընգ Լիկ»ի մասնակցութեան պայմաններէն: Մրցաշարքին կը մասնակցէին եւրոպական երկիրներու ֆուտպոլի ախոյ-



եան ակումբները միայն: Եւրոլը 32 երկիրներ կը մասնակցէին մէկ ներկայացուցիչով եւ մրցաշարքը տեղի կ'ունենար երթ ու դարձի դրութեամբ: Իր շուրջ ստեղծած մեծ խանդավառութեամբ ան կը հանդիսանար բաւական հետաքրքրական եւ բարձր մակարդակի մրցաշարք, որ շուրջ մէջ կը ձգէր եւրոպական միւս երկու մրցաշարքերը՝ Եւրոպայի բաժակակիրներու բաժակի մրցաշարքը (այժմ ջնջուած) եւ Եու. Էֆ. Ա.ի մրցաշարքը (այս տարեշրջանէն սկսեալ «Եւրոքապի»):

1990ականներէն սկսեալ մրցաշարքը կը սկսի իր շուրջ աւելի ու աւելի հետաքրքրութիւն ստեղծել միջազգային իմաստով: Մրցումներու մակարդակը, համակիր մեծ զանգուածի ներկայութիւնը եւ պատկերասփիւռէն ուղղակի սփռումները Եու. Էֆ. Ա.ի պատասխանատուները կը մղեն նոր ձև որդեգրելու մրցաշարքը աւելի մեծցնելու եւ աւելի բարձր մակարդակի հասցնելու համար: Բնականաբար, այս մտածումին մէջ իրենց դերը կ'ունենան քաղաքական նոր պայմանները՝ Խորհրդային Միութեան քայքայումով եւ բազմաթիւ երկիրներու անկախացումով: Մեծ անկախութիւններ կը յայտնուին եկամտուտի յաւելեալ աղբիւրներու իմաստով: Փաստօրէն, մրցաշարքը ակմբային մրցաշարք ըլլալով հանդերձ, իր կարեւորութեամբ չի գիշիր նոյնիսկ ֆուտպոլի աշխարհի ախոյեանութեան:

Նոր ձևով Եւրոպայի այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կ'ապահովեն բոլոր երկիրները, սակայն կարգ մը երկիրներ, որոնք մակարդակով կը գիշին մեծ երկիրներուն, կը պարտաւորուին գտումի մրցումներ կատարել եւ ապա անցնիլ վերջին փուլ՝ այսինքն խմբակային հանգրուան, որմով կը սկսի «Չեմփիընգ Լիկ»ը: Այս ձևը կը սկսի գործադրուիլ 1992-1993 տարեշրջանէն սկսեալ եւ մրցաշարքը կը վերանուանուի «Չեմփիընգ Լիկ»:

Ներկայիս Իտալիա, Անգլիա եւ Սպանիա կը մասնակցին չորսական մասնակիցով, Գերմանիա, Ֆրանսա եւ Փոլըթուգալ երեքական մասնակիցով, Ռումանիա, Հոլանտա, Ռուսիա, Սլովակիա, Ուքրանիա, Պելճիքա, Չեխիա, Յունաստան եւ Թուրքիա երկուքական մասնակիցով, իսկ մնացեալ երկիրները (բացի Լիխթենշթայնէն), մէկական մասնակիցով:

Ի հարկէ այս դրուժիւնը Ֆուլթպոլի «մեծ»երուն ի նպաստ որոշում մըն է: Փաստօրէն, անոնց մեծաթիւ ներկայութիւնը տիտղոսին տիրանալու անոնց հաւանականութիւնը աւելի բարձր կը դարձնէ: Մրցաշարքին վերջին 17 տարիներու պատմութիւնը արդէն ցոյց կու տայ այս իրողութիւնը: Փաստօրէն, 1992էն ետք, բաժակակիրներ հանդիսացած են Սպանիան, Գերմանիան, Անգլիան, Իտալիան, Հոլանտան եւ Փորթուգալը: Ուշագրաւ է նաեւ, որ ո՛չ միայն տիտղոսակիրները, այլև աւարտականի հասնող խումբերը նոյնիսկ այդ երկիրներու ներկայացուցիչներն են: Մինչդեռ նախքան այս դրութեան որդեգրումը Ռումանիոյ, Սկոտլոյ, Սերպիոյ նման երկիրներ յաջողած են տիրանալ տիտղոսին կամ առնուազն հասնիլ աւարտական հանգրուան:

Եւրոպայի Ֆուլթպոլի ախոյեաններու ախոյեանութեան առաջին տիտղոսը շահած է Ռէալ Մատրիտ, 1955-1956 տա-

րեշրջանին, պարտութեան մատնելով Ֆրանսական Ռէյմս խումբը: Իսկ «Չեմփիընզ Լիկ»ի առաջին տիտղոսը շահած է Ֆրանսայի ներկայացուցիչ Մարսէյը, 1992-1993 տարեշրջանին պարտութեան մատնելով Իտալիոյ Ա. Սէ. Միլանը:

Յարզ մրցաշարքի աւարտականին հասած են 39 խումբեր, որոնցմէ 20ը տիրացած են տիտղոսին: Առաւելագոյն տիտղոսները գրպանած է Ռէալ Մատրիտ՝ 9 տիտղոս: Ռէալ Մատրիտի կը պատկանին նաեւ այլ մրցանիշներ: Ան առաւելագոյն աւարտականներու մասնակցած խումբն է (12 խաղ), ինչպէս նաեւ յաջողած է հինգ յաջորդական տարիներ դառնալ տիտղոսակիր: Ան առաւելագոյն մրցումներ եւ յաղթանակներ արձանագրած կազմն է՝ 314 մասնակցութիւն, 180 յաղթանակ եւ 677 նշանակուած կոլեր:

Նկատելի է, որ մրցաշարքի սկզբնաւորութենէն ի վեր կարգ մը երկիրներ, ինչպէս Սպանիա, Անգլիա եւ Իտալիա



ԽՈՒՄԲ	ՄՍԼԿՑ.	Խ.	Յ.	Յ.	Պ.	Նշ.	Ստ.
Ռէալ Մատրիտ	39	314	180	53	81	677	354
Պ. Միւնիխ	25	226	121	58	47	425	225
Մ. Եուճայթըտ	20	206	114	51	41	390	195
Ա. Սէ. Միլան	23	205	113	47	45	362	175
Պարսելոննա	19	196	111	46	39	374	197
Եուվէնթուս	25	194	98	46	50	321	192
Լիվըրփուլ	19	169	97	38	34	312	137
Տինամօ Քիել	27	191	86	39	66	281	228
Պենֆիթա	29	179	85	40	54	325	195
Այաքս	26	157	77	36	44	249	155

խլած են տիտղոսներուն առիւծի բաժինը: Մասնաւորաբար 1970ականներու երկրորդ կէսէն սկսեալ ակներեւ է անգլիական, իսկ աւելի ուշ իտալական տիրապետութիւնը: Սակայն վերջին տասնամեակին իտալացիք սկսած են հեռանալ մրցակցութենէ եւ հրապարակը դարձեալ գրաւած են սպանացիք եւ մասնաւորաբար անգլիացիք:



54 աւարտականներէն 10ն աւարտած են փենայթիւներով: 3 մրցում վերջ գտած է 0-0 արդիւնքով, իսկ 15 մրցում վերջացած է 1-0 արդիւնքով: Ամէնէն կոլառատ աւարտականը եղած է 1959-1960ին, երբ Ռէյալ Մատրիտ 7-3 արդիւնքով յաղթած է Այնթրախթ Ֆրանքֆորթի: 4 աւարտականներ յաղթանակով աւարտած են՝ յետ-երկարաձգման, իսկ մէկ աւարտական՝ Պայէրն Միւնխիւ-Աթլետիքօ Մատրիտ մրցումը կրկնուած է:


Պենֆիլդա եւ Եոլվենթուս առաւելագոյն փոխ ախոյեան հանդիսացող կաղմերն են (5 անգամ), իսկ Ռէյալի կողքին,

մրցումը: Գերմանացիք յաղթական էին մինչեւ մրցումին 90րդ վայրկեանը եւ սրտատրոփ կը սպասէին իրաւարարի սուլիչին: Ամէնէն մոլեռանդ անգլիացի համակիրն անդամ յոյս չունէր թէ մրցումին պատկերը կրնայ փոխուիլ: Զարդ վայրկեանին անգլիացիք կը նշանակեն հաւասարութեան կողմ եւ դերմանացիք տակաւին չսթափած կը ստանան երկրորդ կոլ մը եւ... բաժակը կը յանձնեն անգլիացիներուն:

Այաբա, Պայէրն Միւնխիւ, Պարսելոնա, Մանչեսթր Եոլվերթա, Ա. Սէ. Միլան եւ Լիվրփուլ երեք անգամէ աւելի տիրացած են տիտղոսին:

Առաւելագոյն տիտղոսները խլած են սպանացիք՝ 12 անգամ, իսկ առաւելագոյն փոխ ախոյեան հանդիսացողները եղած են իտալացիք՝ 14 անգամ:

Մրցաշարքի ամէնէն հետաքրքրական աւարտականը կը նկատուի 1998-1999 տարեշրջանի Մանչեսթր Եոլվերթա-Պայէրն Միւնխիւ (2-1)



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations **Yerevan**
 32-38, Hanrabedoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europehotel.am

www.europehotel.am



Պատուոյ նախագահները հիւրերու առաջին շարքին:

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ 34ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՄԵՉ ԱՆՔԱԿՏԵԼԻՑՐԻՆ ԿԱՊԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Մարտ Բեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Երկու ամսուան մարզական մրցակցութիւններէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 34րդ մարզախաղերը եզրափակուեցան

Մ. Նահանգներու անկախութեան օրուան դուգադիպող 2-5 Յուլիսի շաբաթավերջին, Վան Նայսի «Պրըմիէնհամ Հայ Սքուլ»ի շրջափակէն ներս կաղմակերպուած չորսօրեայ փառատօնով:

«Նաւասարդեան» ընտանեկան աւանդ» կարգախօսով առաջնորդուող եւ լայն ժողովրդականութիւն վայելող այս մարզախաղերը վայելեցին Նաւասարդեան անցեալի պատուոյ նախագահներու հովանաւորութիւնը:

Հայոց պատմութեան անցեալի փառահեղ օրերը գաղութէն ներս վերակենդանացնող երիտասարդական այս մարզախաղերու փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 5 Յուլիսի կէսօրէ ետք ժամը 5ին, նոյն վարժարանի ֆութպոլի մարդաղաշտին վրայ, մասնակցութեամբ հազարաւոր ծնողներու, Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու:

Մինչ հանդիսականները իրենց տեղերը կը գրաւէին, միւս կողմէ կաղմակերպիչ յանձնախումբը Նաւասարդեան շապիկներով կը հիւրասիրէր զանոնք:

Ժամը 5ին, շրջանի Սկաուտական Խորհուրդին առաջնորդութեամբ եւ Շրջանային Վարչութեան ատենապետ

եղբ. Սթիւ Արթինեանի գլխաւորութեամբ, մարդաղաշտ առաջնորդուեցան Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահներ եւ «2009ի տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»՝ եղբ. Զաքար Զորպաճեան, կնոջ՝ Մարիի հետ:

Օրուան խօսնակներն էին քոյր Նորա Չափարեան (հայերէն) եւ եղբ. Վաչէ Թովմասեան (անգլերէն), որոնք դաշտ մտուք գործող պատուիրակութենէն անկախ ծանօթացուցին նաեւ ներկայ պաշտօնական հիւրերը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իղմիրեան, Հ. Հ. փոխ հիւպատոս Մեսրոպ Շապոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի նուիրատու Ալիս Անտոնեան, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Տենիս Զէյն, Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, ՀՕՄ-ի եւ Համաղգայինի Շրջանային Վարչութիւններու, ՀԵԴ-ի Կեդրոնական Վարչութեան, Արեւմտեան թեմի Աղգ. Առաջնորդարանի Երիտասարդաց Միութեան ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.ի Հունգարիոյ մեկուսի շրջանի





Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը Մարտապանէ փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան:

Հայրական իր պատգամը կը փոխանցէ Մուշեղ Արք. Սարսիրոսեան:

ատենապետ եղբ. Նիկողոս Յակոբեան, շրջանի Հ.Բ.Ը.Մ.ի ատենապետ Պերճ Շահապազեան, Կլէնտէյլի Հանրային Վարժարաններու Ուսումնական Խորհուրդի փոխ նախագահ Կրէկ Գրիգորեան եւ այլ հիւրեր:

Նախքան պաշտօնական յայտարարին սկսիլը, ներկաները վայրկեան մը յոտնկայս յարգեցին յիշատակը մեղմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Շրջանային խմբապետուհի քոյր Թալին Հինտոյեան պատուոյ նախագահներու եւ Շրջանային Վարչութեան ատենապետին արտօնութիւնը ստանալէ ետք, հանդիսութիւնը սկիզբ առաւ դրօշակի արարողութեամբ:

Շրջանային Վարչութեան շեփորախումբին առաջնորդութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակակիրները յաղթանակի հաստատակամութեամբ մարդազաշտ ներկայացուցին Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Նաւասարդեան դրօշները, բարեկեցին պատուոյ հիւրերը եւ դարձեալ շեփորախումբի կատարողութեամբ հետեւեցան քայլերգներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Ան ողջունելէ ետք ներկաները, ընդգծեց Նաւասարդեանի յաջողութիւնները, որոնք



Հ.Ս.Ը.Մ.ի Արեւմտեան Ս. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան յուշանուէրով մը կը պատուէ Ալիս Անտոնեանը:


հիմնուած են աւանդութիւններու եւ յարատեւութեան վրայ: Յաջողութիւնները մղիչ ուժը կը հանդիսանան այս մեծ կաղմակերպութեան, հաստատակամութիւն փոխանցելով անոր շարքերուն, նչեց ան:

Ապա, Նաւասարդեան մարդախաղերու յաջողութեան մէջ պատուոյ նախագահներու կարեւոր դերը շեշտելով, եղբ. Արթինեան յայտարարեց անոնց անունները, յանձինս քոյր Աշխէն Փիլաճեանի, Անտի եւ Ալին Անտոնեանի, Սարգիս եւ Թամարա Արեւեանի, Ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեանի, Հրաչ եւ Մարինէ Անտոնեանի, Վահէ եւ տըթ-ձէյն Սողոմոնեանի, Շանթ եւ Վերթին Հայթայեանի, Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեանի, Չարլի եւ ձիւլի Կալեանի եւ Վահագն եւ Պաժառ Թովմասեանի: Եղբայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց անոնց եւ յատկապէս նախորդ տարուան նախագահ Վահագն եւ Պայ-

ժառ Թովմասեաններուն, որոնք 2008 տարեշրջանը յիշատակելի դարձուցին:

Ապա, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի արձանագրած մեծ յաջողութիւններուն անդրադառնալով, եղբայրը թուեց վերջին տարիներուն արձանագրուած յաջողութիւնները, որոնց յատկանշականներէն էին՝ շրջանի բանակավայրի իրականացումը, «Արարատ», «Աղատամարտ» եւ Լոս Անձելըսի մասնաճիւղերու, ինչպէս նաեւ շրջանին նոր կեդրոններ ունենալու

երեւոյթը: Շարունակելով, եղբայրը յայտարարեց ուրախ լուր մը, թէ Ալիս Անտոնեան





Նաևասարգեանի պատուոյ Եպիսկոպոսներու եւ «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական 2009»-ի պատուոյ շքախումբը դաշտ մուտք կը գործէ:



իր հանգուցեալ ամուսնոյն՝ Գէորգ Անտոնեանի յիշատակին ստանձնած է հովանաւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի նոր կեդրոնի սրահին եւ այս առիթով երկու հարիւր հազար տուրք կը նուիրէ Հ.Մ.Ը.Մ.ին: Գօտեպնդիչ այս յայտարարութիւնը մեծապէս ոգեւորեց ներկաները, որոնք երկարաշունչ ծափողջոյններով ողջունեցին դայն: Եղբայրը նաեւ բարձր գնահատեց Անտոնեան կրթաթոշակի ստեղծումը, ինչպէս նաեւ «Լոս Անճելըս Լէյքըրզ»ի մարզիկներուն կողմէ ստորագրուած պասքեթպոլի գնդակի մը նուիրումը Հ.Մ.Ը.Մ.ին:

Յատկանշական այս նուիրատուութեան առիթով եղբ. Արթինեան բեմ հրաւիրեց Ալիս Անտոնեանը եւ յուշատախտակով մը պատուեց դայն:

Անտոնեան մեծապէս տպաւորուած իրեն ընծայուած պատիւին համար, իր շնորհակալութիւնները յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին՝ ըսելով. «Մեծ գոհունակութեամբ կը միանամ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին, իրականացնելու համար ամուսնոյս նպատակը, որ հայ կաղմակերպութիւններուն եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ին աջակցելն է: Հ.Մ.Ը.Մ. միշտ վառ կը պահէ հայ մշակոյթը հայ երիտասարդութեան կեանքին մէջ, միշտ վեր պահելով «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը»:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, որ հաստատելով Նաևասարգեան մարզախաղերու յաջող ընթացքը՝ շնորհակարարեց դայն

կաղմակերպող բիւրաւոր կամաւորները, որոնց նուիրեալ աշխատանքին շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ը կ'արզարացնէ իր վրայ դրուած յոյսերը:

«Մենք բոլորս մաս կը կաղմենք այս հսկայ ընտանիքին, որ տարածուած է աշխարհի բոլոր կողմերը, ուր որ հայ կայ: Հպարտութեամբ կ'ուղեմ յիշեցնել ձեր բոլորին, թէ քանի մը ամիս առաջ, հեռաւոր Մոսկուայի մէջ Հ.Մ.Ը.Մ. ունեցաւ իր 100րդ մասնաճիւղը: Ձեզի կը վստահեցնեմ, թէ հոն ուր Հ.Մ.Ը.Մ. կայ, հոն հայ երիտասարդութեան դաստիարակութեամբ զբաղող կամաւորներ կան», ըսաւ եղբայրը եւ եզրակացնելով՝ յաջողութիւն մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ գործունէութեան:





Հայրական իր օրհնութիւնները փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ան նաևասարդեան տողանցքն ու արձանագրուած յաղթանակները շնորհաւորելով, ընդգծեց, թէ անոնք Հ.Մ.Ը.Մ-ին չեն պատկանիր, այլ՝ հայութեան բոլոր միաւորներուն, «որոնք իրենց աչքերը յարած են ու սեւեռած կը պահեն Հ.Մ.Ը.Մ-ի Եռագոյն դրօշին, յաղթանակ պահող վահանին, տոգորուած են «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» պատգամով:

Ապա, գնահատելով Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ ներկաներուն ունեցած մնայուն նուիրումն ու զօրակցութիւնը, Առաջնորդը անդրադարձաւ Արամ Ա. Վեհափառին կողմէ 2009ը «Երիտասարդու-

թեան տարի» հռչակելու իրողութեան եւ վստահեցուց, որ «Նաևասարդեան խաղերն ու յատկապէս այսօրուան տողանցքը գործնական արտայայտութիւններ են մեր ընտանեկան ու հաւաքական կեանքին մէջ երիտասարդ սերունդի ներկայութեան, խանդին ու մասնակցութեան»:

Շարունակելով, Առաջնորդը կոչ ուղղեց ներկայ Հ.Մ.Ը.Մ-ականներուն, ծնողներուն, հայ ժողովուրդի զաւակներուն եւ ըսաւ. «Երիտասարդութեան տարուան առիթով, բազմապատկենք մեր նոր սերունդներու հոգեմտաւոր դաստիարակութեան տրամադրուած ճիգերը: Հայ մանուկն ու պատանին, գիտութեան ու ֆիզիքական աճումի





կողքին, պէտք ունին հողեկան ու մտա-
յին սնունդի, որոնք գիրենք պիտի առաջ-
նորդեն դէպի մարդկային ու աղգային
արժէքներու բարձունքներ: Հայ մնայու
եւ իբրեւ հայ մարդ զարգանալու հա-
մար, նորահաս սերունդը պէտք ունի
մեր եկեղեցական ու աղղային ժառան-
գութեանց աւիշին, անոնց ճանաչողու-
թեան՝ այդ բոլորը իր սեփական հարըս-
տութիւնը նկատելու գիտակցութեան»:

Եզրակացնելով իր իմաստային պատ-
գամը, Առաջնորդը յորդորեց. «Ո՛վ հայ
երիտասարդ, դուն անքակտելիօրէն
կապուած ես մեր ժողովուրդի արմատ-
ներուն ու այսօրուան կեանքին. քու
իրաւունքդ է մեր աղգային ժառանգու-
թիւններն ու աւանդները մարմնաւորել
քու սեփական կեանքիդ մէջ: Այս նպա-
տակին հասնելու համար, ծնողքդ ու ըն-
տանիքդ, եկեղեցիդ, Հ.Մ.Ը.Մ.ը եւ մեր



«2009ի տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»
եղբ. Զաքար Չորպաճեան:

կաղմակերպութիւնները քու կողքիդ են
ու պատրաստ են ուղղութիւն տալու
քայլերուդ, գործիդ: Բոլորս ձեռք-ձեռ-
քի պիտի տանք այսօրուան ու վաղուան
սերունդները դաստիարակելու աշխա-
տանքին մէջ, զիրար պիտի ամբողջացը-
նենք մեր ժողովուրդը յաւերժութեան
տանող դրօշարշաւին մէջ, յանուն հա-
յութեան, յանուն Հայաստանին եւ յա-
նուն Արցախին»:

Առաւել իմաստաւորելով «Երիտա-
սարդութեան տարի»ն, բեմին առջեւ
խմբուեցաւ Արեւմտեան թեմի Աղգ.
Առաջնորդարանի Երիտասարդաց Միու-
թեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի արի-արեանյշներէ
կաղմուած խումբ մը, որ հայերէն եւ
անգլերէն լեզուներով արտասանեց
«Աղօթք երիտասարդներուն» խորադ-
րով աղօթքը, խնդրելով Աստուծմէ, որ
հայ երիտասարդութիւնը հեռու պահէ
ծուլութենէ եւ դատարկաբանութենէ,
ինչպէս նաեւ «...չար ընկերներէ, չար
օրինակներէ, բոլոր տեսակի մարմնա-
կան թուլութիւններէ, եւ տեսանելի ու
անտեսանելի վտանգներէ եւ բարոյա-
կան փորձութիւններէ»:

Առաջին անգամ ըլլալով տեղի ունե-
ցող երիտասարդներու միացեալ այս
աղօթքէն ետք տեղի ունեցաւ այնքան
սպասուած շքերթը: Հ.Մ.Ը.Մ.ի շեփորա-
խումբին հրամցուեցաւ աղգային ու յե-
ղափոխական ոգեւորիչ քայլեղանակնե-
րով տողանցեց շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 34ԴԴ ՄԱՐԶԱԵԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄԸ

Ստորեւ մարդախաղերու ընդհանուր դասաւորման արդիւնքները:-

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյի «Արարատ» մասնաձիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Փասատիմայի «Ազատամարտ» մասնաձիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Գրեսէնթա Ըովիտի «Ծանթ» մասնաձիւղ

ԹԵՆԻՍ

1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյի «Արարատ» մասնաձիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնձ Քաունթիի «Սարդարապատ» մասնաձիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Գրեսէնթա Ըովիտի «Ծանթ» մասնաձիւղ

ԼՈՂ

1. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Ըովիտի «Մասիս» մասնաձիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաձիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Պրայէնքի «Սիփան» մասնաձիւղ

ԹԵԹԵՒ ԱԹԼԵԹ

1. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Ըովիտի «Մասիս» մասնաձիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Սաութ Պէյի «Արագած» մասնաձիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անձելըսի մասնաձիւղ

ՎՈՒԹՅՈՒՆ

1. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Ըովիտի «Մասիս» մասնաձիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաձիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյի «Արարատ» մասնաձիւղ

ՖՈՒԹՊՈՒԼ

1. Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անձելըսի մասնաձիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյի «Արարատ» մասնաձիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Փասատիմայի «Ազատամարտ» մասնաձիւղ

ՊԱՐԵՏՊՈՒԼ

1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյի «Արարատ» մասնաձիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Ըովիտի «Մասիս» մասնաձիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Գրեսէնթա Ըովիտի «Ծանթ» մասնաձիւղ

ընտանիքը: Յաջորդաբար մարդադաշտ ներկայացան շրջանի 17 մասնաճիւղերու վարչականները, յանձնախումբերը, արի-արենոյշները, երէց-պարմանուհիները եւ յատկապէս հայութիւնը յուսադրող գայլիկ-արծուիկները: Տողանցեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Թեքոյա բանակավայրի յանձնախումբն ու ենթալանձնախումբերը:



Ոգեւորութեամբ տողանցեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը: Տողանցեց հրպարտ, ինքնավստահ ու յաղթական: Տողանցեց նաեւ մարդախաղերուն հիւրաբար մասնակցող հեռաւոր Աւստրալիոյ պասքեթպոլի տղոց խումբը, մեծ ոգեւորութիւն ստեղծելով մարդադաշտէն ներս:

Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան հաւատարիմ տողանցողները հաստատակամութեամբ բարեւեցին պատուոյ հիւրե-

րը եւ գիրենք խրախուսող ծովածաւալ բաղմութիւնը: Պատուոյ հարթակին առջեւ ստանձնեցին իրենց ախոյեանութեան բաժակները եւ ներկաներու երկարաշունչ ծափողջոյններուն եւ ուրախ բացականչութիւններուն արժանանալով իրենց տեղերը գրաւեցին մարդադաշտին վրայ:

Օրուան խօսնակները հպարտանքով ներկայացուցին տողանցող մասնաճիւղերը եւ յայտարարեցին անոնց արձանագրած յաջողութիւններն ու Նաւասարդեան յաղթանակները:

Հանդիսութեան աւարտէն ետք, ներկաները փութացին փառատօնի շրջափակը եւ մասնակից դարձան Նաւասարդեան փառատօնի վերջին յայտագրին, որուն եզրափակումը կատարեց աղղային-յեղափոխական երգերու մեկնարան Գառնիկ Սարգիսեան: Նաւասարդեան խրախճանքը շարունակեցաւ մինչեւ կէս գիշեր:

Հ.Մ.Ը.Մ.ով վերանորոգուած ներկաները բարձր տրամադրութեամբ մեկնեցան տուն, անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի հպարտանքն ու վեհութիւնը ապրելով:



Hratch and Neshan Boyadjian

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811
 Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon
 Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>



Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԱՐԱՏ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՐԶԱԴԱՇՏ

Գեորգ Պետիկեան ՓԱՍՏԻՆԱ

Միլիոնավոր կեանքը միշտ եղած է գեղեցիկ անակնկալներով լեցուն, երբ իր շուրջ համախմբուած անդամները եզած են աշխոյժ, ձեռնհաս եւ համակ նուիրումով աշխատունակ:

Անկասկած, որ նման հետեւողական աշխատանքի մը արդիւնքն էր Հ.Մ.Ը.Մ.Ի Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղի աւելի քան երեսուն տարիներու մեծ երազին իրականացումը՝ սեփական մարզադաշտի մը տիրացումը:

Փաստինայի նոր Հայ Կեդրոնէն ներս Հ.Մ.Ը.Մ.Ի «Նշան եւ Սօսի Սաչիկեան» նոր մարզադաշտին արագ եւ ամբողջական վերաշինութիւնը ինքնին, իբրեւ մեծ իրագործում, յաղթական պատկեր մը կը ներկայացնէ: Խորքին մէջ ան արդիւնքն է մարզադաշտ ունենալու հաւատքը ունեցող ազգայիններու մեծ եւ գերազանց ճիգերուն:

Այլ խօսքով, մասնաճիւղը շնորհիւ իր անդամներուն եւ համակիրներուն յաղթանակէց: Նման կառույցի մը հանդէպ հաւատք ունեցողները անոնք են, որոնք բարոյապէս եւ նիւթապէս օժանդակեցին եւ իր լրումին հասցուցին ազգանուէր այս աշխատանքը:

Այսօր «Ազատամարտ» մասնաճիւղը տէր է նման կառույցի մը:

Փաստօրէն, արդիւնքն է որ կը խօսի:

Այս առթիւ, մասնաճիւղին վարչութիւնը գրեթէ ամէն օր, Հայ Կեդրոն այցելող իւրաքանչիւր այցելուէ կը լսէ գնահատանքի եւ շնորհաւորական խօսքեր, որոնք լաւագոյն արտայայտիչը կը հանդիսանան իրենց ապրումներուն:

Այս բոլորը կը բացայայտեն նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի «Ազատամարտ» մասնաճիւղը կը վայելէ արժանավայել գուրգուրանքը շրջանի հայրութեան:

Պաշտօնապէս շնորհաւորելու եւ իր գնահատական խօսքերն ու զօրակցութիւնը յայտնելու համար, ինչպէս նաեւ քոյր միութեան վարչական կազմին աւելի մօտէն ծանօթանալու ցանկութեամբ եւ աւելի արդիւնաբեր ձեւով օգտակար դառնալու առաջադրանքով, վերջերս, Հ.Մ.Ը.Մ.Ի «Արարատ» մասնաճիւղի վարչութիւնը իր լման կազմով այցելեց Փաստինայի նոր Հայ Կեդրոնը, ուր դիմաւորուեցաւ «Ազատամարտ» մասնաճիւղի վարչութեան անդամներուն կողմէ:

Աւելի քան մէկ ժամուան այս եղբայրական հանդիպումին սկիզբը, հիւր Հ.Մ.Ը.Մ.ականները շրջեցան նոր Կեդրոնի զանազան բաժանմունքները եւ գովասանքով արտայայտուեցան նոր կառուցուած մարզադաշտին մասին:

Ապա, իրարու ծանօթացման բաժինէն ետք, Կեդրոնի ժողովասենակէն ներս տեղի ունեցաւ մտերմիկ զրոյց, Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին վայել յարգանքով եւ հասկացողութեամբ:

Երկու վարչութիւններն ալ իրարու աշխատանքի հանգրուանները աչքէ անցուցին, միաժամանակ միասնաբար գնահատեցին սկսուտական եւ մարզական բաժիններէն ներս արձանագրուած նուաճումները, մատնանշեցին միութե-



նական առաքելութեան անհրաժեշտութիւնը եւ շեշտեցին Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին բարգաւաճման ու ծագկումին սատարող իրագործումները:

Երկու կողմերն ալ իրենց ուրախութիւնն ու վարձատրութիւնը գտան մարզիկներու եւ սկսուտներու յաջողութիւններուն մէջ եւ թելադրութիւններ փոխանակեցին ու խոստացան սերտ գործակցութեան միջոցառումի մէջ շարունակել նման այցելութիւնները:

Աւարտին, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի շուշանածագիկը կրող կարկանդակի հիւրասիրութիւնը, զոր հիւր վարչութիւնը իր բարի մաղթանքներուն կողքին բերած էր հիւրընկալ մասնաճիւղին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ 23ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Շանթ ժամկոչեան ՏԻԹՐՈՅԹ

ՀՄԸՄ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային 23րդ բանակումը տեղի ունեցաւ 19-23 Օգոստոս 2009ին, Մէրիլէնտ նահանգի «Ուէսթ» բանակավայրին մէջ, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

Բանակումին Շրջանային Սկաուտական Խորհուրդէն ներկայ էին եղբայրներ Զարեհ Գարակիւլյեան,

Շանթ Ժամկոչեան, քոյր էլիզապէթ Տրամկոչեան, Շրջանային խմբապետ եղբ. Արամ Գայսերեան եւ Շրջանային Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչ քոյր Երան Սիմոնեան:

Բանակումին կազմակերպման եւ իրագործման հիւրընկալ մասնաճիւղ չունենալով, Շրջանային Խորհուրդը այս տարի ինք ստանձնեց բանակումին բոլոր աշխատանքները:

Բանակումին մասնակեցան 145 սկաուտներ, որոնց 55ը եկած էին Պոսթրնէն, 10ը՝ Շիքակոյէն, 6ը՝ Տիթթոյթէն, 15ը՝ Ֆիլատելֆիայէն, 21ը՝ Ուաշինկթընէն, 2ը՝ Ֆլորիտայէն, 18ը՝ Նիւ ձըրքիէն, 18ը՝ Փրովիտընսէն: Բանա-

կումին կը մասնակցէին նաեւ 12 դայ-լիկ-արծուիկներ:

Բանակումին ընթացքին սկաուտները հետեւեցան դաստիարակչական հետեւեալ նիւթերուն.-

● Ընկերաբանական- «Անհատական ճարտարութիւն» (Personal skills), եղբ. Սարգիս Տրամկոչեան:

● Սկաուտական- «Խարոյկ պատրաստել, աշտարակ եւ կայմ շինել», եղբ. Սմբատ Տրամկոչեան: «Պահակութիւն եւ շարքային աշխատանք», եղբ. Արամ Գայսերեան:

● Միութենական- «Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտին եւ արծուիկին դերը ազգային կեանքին մէջ», եղբ. Գէորգ Թաթար-



եան: «Սկսուտական խորհուրդները Շրջանային եւ մասնաճիւղի», եղբ. Զարեհ Գարակիլիւէեան:

● Հ ա մ ա - Հ . Մ . - Ը . Մ . ական բանակումի իրենց փորձառութիւնները փոխանցեցին քոյրեր Արշօ Գանթարճեան եւ Լորիկ Փիլիպոսեան:

● Աղգալին- «Մեր հայրենիքի քրիստոնէական ճարտարապետական հարստութիւնները», եղբ. Սահակ Զաքարեան: «Հայ Դատ եւ հայ սկսուտը», քոյր Սօսէ Պէօճէքեան:

● Շտապ օգնութիւն եւ առողջապահութիւն, քոյր Ալին Պաղտասարեան:

Դաստիարակչական նիւթերու աւարտին, բանակողներու լուսաբանական հարցումները առիթ տուին գրոյցներու, ինչ որ նիւթերը դարձուցին աւելի շահեկան:

Հակառակ օդի աննպաստ պայմաններուն, բանակումին նախափերջին օրը բանակավայր այցելեցին Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութեան անդամներ, ծնողներ եւ համակիրներ:

Դրօշակի արարողութեան ընթացքին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի պատրաստութեան երկու սեմինարներու ընթացքին Ա. կարգի քննութեան յաջողած 13 քոյրերուն եւ եղբայրներուն յանձնուեցան վկայագիրներ եւ կրծքանշաններ:

Դրօշակի արարողութեան աւարտին, բանակողները ընթրիքով մը հիւրասիրեցին բոլորը: Կարճ դադարէ մը ետք սկսաւ խարուկահանդէսը, ուր բանակողները ներկայացուցին զաւելտներ, խմբային կանչեր, խմբերգներ եւ պարեր: Սկսուտ քոյրերու եւ եղբայրներու ներկայացուցած յայտագիրէն խանդավառուած՝ եղան սրտաբուխ նուիրատուութիւններ: Խարուկահանդէսի յայտագրին վերջին բաժինը վերապահուած էր ձայնի հաղորդավարին, որ հայկական եւ օտար երգերով երեկոն խանդավառեց խմբային պարերով:



Բանակումը յաջող էր, յատկապէս մասնակցութեան թիւը, սկսուտներուն ջերմ տպաւորութիւնը, հակառակ թրւականին խաչածեւումը կարգ մը դպրոցներու վերամուտին հետ:

Հարկ է յիշել խոհանոցի կամաւոր քոյրերն ու եղբայրները՝ Ֆիմի Իշխանեանը, Արօ Վարդանեանը, Սիլվա Խաչատուրեանը, Լենա Քէշիշեանը, Ռան Պէյլինը եւ Վիթի Պէյլինը: Վերջինը նաեւ ձեռնային աշխատանքներու պատասխանատուն էր: Անոնք ոչինչ խնայեցին բանակումին յաջողութեան համար: Յատուկ շնորհակալութիւն բանակումի հիւանդապահուհի քոյր Սարին Պաղտա-

սարեանին: Վերջին օրը, դրօշակի փակման արարողութեան ընթացքին խօսքեր արտասանեցին Շրջանային Սկսուտական խորհուրդի ատենապետ եղբ. Զարեհ Գարակիլիւէեան եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ քոյր Երան Սիմոնեան, որոնք շնորհաւորեցին բոլորը՝ յաջող բանակում մը ունեցած ըլլալուն համար:

Խ մ բ ա պ ե տ ա կ ա ն կաղմն ու Շրջանային խմբապետը յուշանուէրներ բաժնեցին գայլիկարծ ու ի կ ն եր ու ն ,

կրծքանշաններ՝ աղատարարներ քոյր Արտա Գրիգորեանին եւ եղբ. Աղամ Աքչեանին, իսկ բոլոր բանակողներուն՝ 23րդ բանակումի կրծքանշանն ու շապիկները:

Ի վերջոյ, յետադարձ ակնարկ մը նետելով բանակումին վրայ, կարելի է հաստատել, որ ծնողներու, պատասխանատու մարմիններու եւ խմբապետական կաղմի անդամներու միասնական համոզումն ու հաւատքը Հ.Մ.Ը.Մ.ի հետապնդած մեծ գաղափարին եւ համբուրաշխ համագործակցութեան մեծագոյն գրաւականները հանդիսացան:

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Իբրեւ «Քաջալեր անդամ»ներ, Արեւելեան Մ. Նահանգներէն կը նշանակուին:

- Զարեհ Գարակիլիւէեան \$ 200
- Պետիկ Տէր Վարդանեան \$ 200
- Լեւոն Փալեան \$ 200
- Կարպիս Պարսումեան \$ 200
- Վահրամ Դանիէլեան \$ 200
- Ազատուհի Դանիէլեան \$ 200
- Վազգէն Լախոյեան \$ 200

- Եղբ. Ծորոճ Տաքէսեան (Ամման) \$ 300
- Եղբ. Յարութիւն Ծառուկեան (Պուէնոս Այրէս) \$ 200
- Քոյր Էլիզ Պարսամեան (Պուէնոս Այրէս) \$ 200
- Եղբ. Սարգիս Ստեփանեան (Պոսթըն) \$ 100



ԼՈՆՏՈՆԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30ԱՄԵԱԿ



Յուպի Սարուխանֆ ԼՈՆՏՈՆ

28 Յունիս 2009ին, «Grasshoppers RFC Osterley»-ի մէջ, 450 հոգիէ աւելի Հ.Մ.Ը.Մ-ի անդամներ, պատասխանատուներ, վարչական կազմ, յանձնախումբեր ու համակիրներ, անտեսելով ամպամած երկինքը, հաւաքուած էին միասնաբար տօնախմբելու Հ.Մ.Ը.Մ-ի Լոնտոնի մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակը:

Տեղույն յարմարութիւնները մեծապէս նպաստած էին լաւապէս կազմակերպելու համար դաշտահանդէսի այլազան խաղերը:

Մուտքին, իբրեւ յիշատակ, մասնակիցներուն տրուեցան մասնաճիւղին 30ամեակը խորհրդանշող կրօնագրեր:

Դաշտահանդէսի մթնոլորտին պատ-

կերը ունենալու համար պէտք է երեւակայել մարզադաշտը՝ իբրեւ խորովածի պատրաստութեան վայր, մատուցուած ներկաներու կողմէ:

Անդին տաղաւարները, որոնց վրայ տեղադրուած էին նախկին բանակումներու նշանները:

Այլ մարզադաշտ մը ընդունած էր մարզական խաղերու մասնակիցները. հոն տեղի ունեցան նարտիի, նետի եւ մարզական այլ խաղեր:

Խաղերու կողքին կար օրուան պաշտօնական բաժինը, որուն ընթացքին ելոյթ ունեցան Հայր Նաթան Յովհաննէսեան, Հ. Հ. դեսպան Վահէ Գարբիէլեան եւ յրեկեար մասնաճիւղի ատենապետ եղբ. Արմանտ Աբրահամեան:

Եղբ. Աբրահամեան իր խօսքին մէջ ծառայեց Հ.Մ.Ը.Մ-ի Լոնտոնի մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եղբ. Հրայր Տէր Գրիգորեանի յիշատակին վրայ: Եղբ. Տէր Գրիգորեան 2009 սկիզբը իր մահականացուն կնքած էր Լոս Անճելըսի մէջ:

Դաշտահանդէսին ընդգծելի կէտը կը մնար անդամներու կողմէ դեղեցկօրէն ներկայացուած պարային մատուցումը, որ կը ցոլացնէր իրենց շարաթօրեայ դործունէութեան մէկ պատկերը:

Այդ օր հիւրերը հիւրընկալեցին նոր անդամը՝ «արջը», որ մասնակցեցաւ ձեռնարկին:

Պարմանուհիները կատարեցին բացումը, վառելով ջահը, այնուհետեւ շե-

փորախումբը 20 թմբուկով նուազեց եղանակներ: Բոլոր մարզական խումբերը տպաւորիչ ձեւով ֆուլթայոյի եւ պասքէթի իրենց ձիրքերը ցուցադրեցին. հիւր «արջը» ամէն ճիգ ի գործ կը դնէր «խանգարել» փորձելով անոնց ներկայացումները եւ զուարճալի պահեր կը ստեղծէր:

Անդամները շինած ու ներկայացուցած էին մեծ չափերով ինքնաշարժներ, իսկ շտապ օգնութեան բաժինը՝ մեծ ասեղներ, վիրակապեր, ուր կը ցուցադրուէին շտապ օգնութեան ձեւեր:

Առիթ ստեղծուած էր նաեւ տեսնելու բազմաթիւ նշանաւոր խոհարարներ՝ բանջարեղէն մաքրելու եւ համով ճաշ եփելու ընթացքին:

Դեղին գօտի կրող տղաքաղջիկներ ներկայացուցին իրենց սորված քարաթէի ձեւերը: Ապա, պզտիկ «ուէնպո»ներ, երեսները ներկուած, նուազեցին «Մենք գալիս ենք կուրի համար»: Պարմանուհիներէ բաղկացած պարախումբը կարմիր-կապոյտ-նարնջագոյն թաշկինակներով խրախուսեց ներկաները:

Փակման պահուն, ձեռնարկի բոլոր մասնակիցները բեմ բարձրացան եւ արձակեցին փուչիկներ, մինչ անդամ մը պարզեց Հ.Մ.Ը.Մ-ի Լոնտոնի մասնաճիւղի 30ամեակի պատատուր, մաղթելով նոր 30ամեակներ:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՄԿԱՌԻՏԱԿԱՆ Բ. ԿԱՐԳԻ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՆԻՄ



Լիրուած բանախօսաների կողմից: Դպրոց-բանակումին դասախօսեցին եղբ. Մանուկ Մանուկեանը Սիրիայից («Հ.Մ.-Ը.Մ.ի վերահիմնադրումը հայրենիքում»), Սեդա Գրիգորեանը («Հայկական Սփիւռք, գաղթօճախներ»), քոյր Նարինէ Թովմասեանը («Երեխաների տարիքային բաժանումներ, հոգեբանութիւն»), եղբ. Զինաւոր Մեղրեանը («Արցախեան շարժում, Հ.Հ. Ազգային Հերոսներ»), Հայկական Կարմիր Խաչի կազմակերպութեան հրահանգիչ Ներսէս Յակոբեանը («Առաջին բուժօղնութիւն՝ կտորուածքներ, խայթոցներ, անշարժացում»):

Գիտելիքային ցանկի սկառտական դասախօսութիւնները ընթերցուեցին վարչութեան անդամների, Խմբապետական Խորհրդի եւ խմբապետական կորիզի աւագ քոյր-եղբայրների կողմից: Դպրոց-բանակումի ընթացքում մեծապէս շեշտը դրուել էր մասնակիցների հետ բարոյաճողեանական քրննարկումների անցկացման վրայ, որի միջոցով արդիւնաւէտօրէն վեր էին հանուում այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սկառտութեան արժեհամակարգի դերը պատանիների եւ երիտասարդների կեանքում, կենսակերպում եւ ընդհանրապէս մեր կազմակերպութեան գործունէութեանն ու գաղափարախօսութեանը առնչուող բազմաթիւ հարցեր:

Ռ. Պետրոսեան ԵՐԵՒԱՆ

Օգոստոսի 15ից 18ը Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Բիւրականի բանակավայրում տեղի ունեցաւ Բ. կարգի սկառտական դպրոց-բանակում, որին մասնակցեցին 80 արի-արեւոյճներ եւ երէց-պարմանուհիներ, ինչպէս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի բոլոր միաւորներից, այնպէս էլ նոր կազմաւորուող Աշտարակի կառույցից:

Դպրոց-բանակումին մասնակցեցին Նորընծայ գիտելիքային կարգ ունեցող քոյր-եղբայրներ եւ Երեւանի ու Աբովեանի նոր կազմաւորուող երէցական փաղանգների 15 երէց-պարմանուհիներ, որոնց մեծ մասը յաջողութեամբ յանձնելով քննութիւնը եւ մասնակցելով երէցական երդմանը՝ ստացան համապատասխան կարգեր եւ աստիճաններ: Մասնակիցներից ոմանք էլ ու-

նենայով արդէն իսկ Բ. կարգ, վերահաստատեցին այն:

Դպրոց-բանակումի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Օգոստոսի 15ի յետմիջօրէին: Բացմանը ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան ղեկաւորներ, պաշտօնական հիւրեր եւ կազմակերպութեան բարեկամներ:

Եւօրեայ դպրոց-բանակումի իւրաբանչիւր օրուան ընթացքում ընթերցուում էր 8-10 դասախօսութիւն, որոնց զգալի մասը մատուցուեց յատուկ հրա-



Դպրոց-բանակումի հանդիսաւոր փակումը տեղի ունեցաւ Օգոստոսի 17ի երեկոյեան ժամը 7ին: Օգոստոսի 18ին ժամը 9-12ը անցկացուեց մատուցուած գիտելիքային ցանկին համապատասխան քննութիւն, որի արդիւնքում 35 արի-արեւոյճներ եւ երէց-պարմանուհիներ ստացան սկառտական Բ. կարգ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄ



Ռ. Պետրոսեան ԵՐԵՒԱՆ

Օգոստոսի 18ից 23ը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Բիւրականի բանակավայրում տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի համահայաստանեան տարեկան ընդհանուր բանակումը, որին մասնակցեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի բոլոր միաւորներէից եւ Աշտարակի նոր կազմաւորուող կառույցից 250 գայլիկ-արծուիկներ, արի-արեւոյշներ եւ երէց-պարմանուհիներ:

Բանակումը նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի հայրենիքում վերահիմնադրման 20ամեայ յորելեանին, այդ պատճառով էլ բանակումի խմբապետական կազմին իր առջեւ խնդիր էր դրել բանակումն անցկացնել բովանդակային եւ գործնական յագեցուածութեամբ:

Բանակումի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Օգոստոսի 18ին: Բացման ներկայ էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Կենտրոնական Վարչութեան դիւանն ու պաշտօնական այլ հիւրեր: Բանակումի Յրդ օրը՝ Օգոստոսի 21ին, Բիւրականի բանակավայրից խմբապետական կազմի գլխաւորութեամբ բանակողներն իրականացրեցին քայլարշաւ դէպի Արշակունիների արքունական դամբարան (Արագածոտնի մարզ, գիւղ Ձորափ), որտեղ դամբարանի յուշակոթողին հանդիսաւոր պայմաններում 22 երէց-պարմանուհիներ երէցական երգում տուեցին: Երդման արարողութիւնն անցկացրեցին ընդհանուր խմբապետ եղբ. Ռո-



մանոս Պետրոսեանն ու փոխ խմբապետ եղբ. Վիգէն Յովհաննիսեանը: Երդման արարողութիւնն օրհնեց Բիւրականի հոգեւոր հովիւ Տէր Մամբրէ Քահանան: Յատկանշական է, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 20ամեայ պատմութեան մէջ այս երդմանակալութիւնն արժեւորուեց որպէս առաջին հանդիսաւոր երէցական երգում: Բանակումի ընթացքում նաեւ իրականացուեց գայլիկ-արծուիկների հետախուզական արշաւ:

Բանակումին մեծ ուշադրութիւն էր յատկացուած նաեւ ընդհանուր մրցակցային ոգու բարձրացմանը, որի համար նաեւ յաճախակի անցկացուեցին Ֆիզիքական պատրաստութեան մրցաշարեր, արգելագոտու յողթահարում եւ բազմապիսի մարմնակրթող խաղեր:

Հարկ է նշել, որ բանակումին նախորդած Բ. կարգի դպրոց-բանակումի մասնակիցները ներգրաւուել էին բանակումի աստիճանաւորական կազմում, որպէսզի գործնականօրէն իրականացնեն իրենց ստացած տեսական գիտելիքները, որի արդիւնքում էլ բանակումի փակման հանդիսաւոր արարողութեան ընթացքում իրականացուեց սկաուտական եւ երէցական աստիճանատուութիւն:

Բանակումի ընթացքում բանակողների համար ընթերցուեցին նաեւ սկաուտական, ընդհանուր զարգացման, ազգային-հայրենասիրական եւ կրօնական թեմաներով դասախօսութիւններ, որոնք մատուցուեցին հրաւիրուած հիւրերի (Ձինաւոր Մեղրեան, Արթուր Ռաւոյեան, Տէր Մամբրէ Քահանայ) եւ մեր խմբապետների կողմից (Ռ. Պետրոսեան, Վ. Յովհաննիսեան, Կ. Տէրտէրեան, Ա. Կարապետեան, Ն. Մարգարեան):



Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԷՄՊՈՐԻՃԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Ցույեր Փանոսեան քԷՄՊՐԻՃ

ՀՄԸՄԻ Քէմպրիճի մասնաճիւղի սկաուտական նորակազմ շարժումը ամառնային իր անդրանիկ բանակումը կատարեց «Քեյսօ քոնվորզէյըն էրիա»յի մէջ:

Սկաուտները բանակավայր ժամա-

նեցին անսահման խանդավառութեամբ: Օղի աննպաստ պայմաններուն պատճառով, անոնք վրանները սկսան լարել անձրեւուն տակ, բայց այդ մէկը ոչ մէկ ձեռով կասեցուց անոնց խանդավառութիւնը, ընդհակառակն՝ իւրաքանչիւրին մէջ ամրապնդուեցաւ հայ սկաուտին չարքաշ նկարագիրը:

Բանակումին իրենց մասնակցութիւնը բերին տասնվեց սկաուտներ եւ երկու խմբապետներ, իրենց կողքին ու-

նենայով խոհարարներ եւ մատակարարներ: Երեք օրուան ընթացքին անոնք ունեցան դաստիարակչական պահեր, արշաւներ, նաւարկութիւն եւ ձեռնային աշխատանքի ժամեր: Շնորհիւ խմբապետներուն, բանակողները ունեցան բանակումի սերտուած յայտագիր:

Ցատկանշական էին գիշերային պահակութիւնները: Տակաւին անփորձ սկաուտները, հերթական դրութեամբ եւ առանց որեւէ գանգատի, կատարեցին գիշերային պահակութիւն, ու մեծ հետաքրքրութեամբ եւ օրինաւորութեամբ եղան պահակները իրենց քոյրեղբայրներուն: Իսկ ի՞նչպէս մոռնալ սկաուտներուն կառուցած դրօշակի ձողը: Առաջին օրը, խմբապետ եղբայրը սկաուտներէն խնդրեց, որ անտառին մէջէն գտնեն դրօշակի արարողութեան յատուկ փայտ մը: Քանի մը վայրկեան ետք, հեռուէն յուսեցան բացականչութիւններ: Բոլորին ուշադրութիւնը կեդրոնացաւ այդ կողմ եւ պարզուեցաւ որ քանի մը սկաուտներ մեծ ուրախութեամբ կը բերէին այնքան երկար փայտ մը, որ կարելիութիւնը պիտի ստեղծէր հեռուէն տեսնելու Եռագոյնը, ՀՄԸՄԻ դրօշն ու Գանատայի դրօշը, այս



օտար ափերուն վրայ: Սկսուածները իրենց խմբապետներուն օգնութեամբ, կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն պարաններով զարդարեցին ձողը եւ զայն տնկեցին բանակավայրին կեդրոնը:

Բանակումին նախավերջին օրը տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն եւ խարուկահանդէս, մասնաճիւղի վարչութեան, ծնողներու եւ հարազատներու ներկայութեամբ: Միջնադին, խարոյկը բոցավառեցաւ եւ քանի մը ժամ

անդադար, սկսուածները կանչելով, երգերով, զաւեշտներով ու պարերով ներկաներու հոգիներուն մէջ սրսկեցին հպարտ պատասխանատուի եւ ծնողքի անբացատրելի զգացումը:

Վերջին օրը, առաւօտեան, սկսուածները սկսան հաւաքել վրանները եւ մաքրել բանակավայրը: Մեծ յուզումով անոնք հրաժեշտ տուին այդ անզուգական բանակումին եւ բոլորը անխօր խնդրեցին, որ յաջորդ տարիներուն

նմանօրինակ բանակումներ կատարելին աւելի երկար տեւողութեամբ:

Կարելի չէ ուրանալ Քէմպրիճի մասնաճիւղի վարչութեան անսակարկ նուիրումը, խմբապետներու աննման աշխատանքը եւ ծնողներուն նեցուկ կանգնելու զոհողութիւնը՝ նման բանակումի մը յաջողութեան ի խնդիր:

Բոլորին վարձքը կատար:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԸ

Մոսկ Թօփուզեան ՄՈՆԹՐԵԱԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի շրջանի սկսուածական տարեկան սեմինարը տեղի ունեցաւ Շաբաթ, 3 Հոկտեմբեր 2009ին, առաւօտեան ժամը 9էն սկսեալ, Քինկըսթըմի մէջ: Ներկայ էին վարչականներ, Սկսուած Խորհուրդի անդամներ, խմբապետ-խմբապետուհիներ, փոխ խմբապետ-խմբապետուհիներ եւ օգնականներ: Ընդհանուր՝ 48 անդամներ: Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսկ Թօփուզեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ կարգաց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան հրապարակած հաղորդագրութիւնը՝ հայ-թրքական յարաբերութիւններու մասին: Եղբայրը նաեւ փոխանցեց տեղեկութիւններ՝ ստեղծուած միջնորոտին եւ կատարուած աշխատանքներուն մասին: Ան շեշտեց միութեան շարքերուն գործնական մասնակցութիւնը այս առիթով կազմակերպուած բոլոր ձեռնարկներուն:

Սեմինարին դաստիարակչական բաժնին մէջ ներկայացուեցան երկու նիւթեր: Առաջինը, եղբ. Գօգօ Դերձակեան՝ «Ազգային եւ Հայեցի դաստիարակութիւն նիւթը գիտակցիլ եւ փոխանցել շարքերուն, մեր առօրեայ աշխատանքներուն ընդմէջէն»: Երկրորդը, եղբ. Մկօ Մղտեսեան՝ «Ձուրը խմէ իր աղբիւրէն՝ Right Sources: Մարմիններու յարաբերութիւններ եւ տեղեկութիւններու ճիշդ փոխանցում»: Ժողովականները մեծապէս գնահատեցին ներկայացուած նիւթերը:

Կէսօրէ ետք տեղի ունեցաւ խմբապետական ժողով: Մասնաճիւղերու սկսուածական գործունէութեան հակիրճ զեկոյցներէն ետք, մանրամասնօրէն քննուեցան համա-Հ.Մ.Ը.Մ.Ի-ական 9րդ բանակումի նախապատրաստական աշխատանքները: Բանակումը տեղի պիտի ունենայ 2010ին, Հայաստանի



մէջ: Ժողովը փակուեցաւ յետմիջօրէի, ժամը 5ին, եղբ. Մոսկ Թօփուզեանի շնորհակալական եւ գնահատանքի խօսքով, ապա՝ «Յառաջ նահատակ» քայլերով:

ՄԱՐԶԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ

Մարզական սեմինարը տեղի ունեցաւ յաջորդ օր, Կիրակի, 4 Հոկտեմբեր 2009ին, առաւօտեան ժամը 9էն սկսեալ, նոյն վայրին մէջ: Ներկայ էին վարչականներ, Մարզական Խորհուրդի անդամներ, մարզիչներ եւ պատասխանատուներ: Ընդհանուր՝ 31 անդամներ: Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսկ Թօփուզեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ կարգաց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան հրապարակած հաղորդագրութիւնը՝ հայ-թրքական յարաբերութիւններու մասին եւ տեղեկութիւններ տուաւ այս առիթով ստեղծուած միջնորոտին եւ կատարուած աշխատանքներուն մասին: Սեմինարին դաստիարակչական բաժնին մէջ



ներկայացուցեցան նախորդ օրուան երկու նիւթերը, որոնք դարձեալ գնահատուեցան ժողովականներու կողմէ: Սեմինարի ժողովական բաժնին մէջ քննարկուեցան հետեւեալ նիւթերը:-

● **Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ մարզախաղերու գեկոյց:** Կարդացուեցաւ Կեղրոնական Վարչութեան շրջաբերականը, ուր մանրամասն տեղեկութիւններ կը փոխանցուէին խաղերուն մասին:

● **Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի 39րդ մարզախաղեր:** Կազմակերպչական աշխատանքներու համար եղան շինիչ թելադրութիւններ:

● **Համա-Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդ մարզախաղերու նախապատրաստական աշխատանքներուն մասին եղան գործնական թելադրութիւններ:**

● **Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերուն լաւ ձեւով պատրաստուելու միջոցներ:**

● **Ժողովը փակուեցաւ յետմիջօրէի ժամը 4ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:**



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԾԻԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Մարիա Չոլաքեան ՊՈՒՐԾ ՅԱՍՈՒՏ

«Ով բանակում դուռն ես մեր իտէալը,
Ով բանակում ինչ անոյշ անուն»:



Հ.Մ.Ը.Մ.ի Պուրծ Համուտի մասնաճիւղի 2008-2009 տարեշրջանի բանակումը տեղի ունեցաւ Շուֆի Տէյր էլ Ամար գիւղին մէջ՝ մասնակցութեամբ մասնա-

ճիւղի 190 քոյր-եղբայրներու:

Ամբողջ շաբթուան մը ընթացքին մասնաճիւղի անդամները կատարեցին զուտ սկստական աշխատանքներ՝ ամբողջ տարուան ընթացքին իրենց ստացած գիտելիքները գործադրելով, բանակավայրը միշտ խանդավառելով, յարատեւ աշխատանքով, զանազան կանչերով, երգերով, պարերով եւ խորուկահանդէսի պատրաստութեան մնայուն փորձերով:

Բանակումին չորրորդ օրը, երէց-պարմանուհի փաղանգները արշաւով մը ուղղուեցան Քասր Մուսա, ուր ծանօթացան պալատի պատմութեան:

Յաջորդ օր, գայլիկ-արծուիկները բանակավայր հասնելէ ետք, բոլոր մասնաճիւղը այցելեց Պէյթէտտին եւ ծանօթացաւ անոր տարբեր բաժիններուն:

Մէկ շաբթուան տքնաջան աշխատանքը արժեւորուեցաւ փակման խորուկահանդէսին ներկայացուած կենդանի պատկերներով, պարերով, կանչերով եւ զաւեշտներով, որոնք արժանացան ներկաներու գնահատանքին:





Բանակումի ընթացքին բանակավայր այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը, Շրջանային Սկաուտական Խորհուրդը, Շրջանային խմբապետութիւնը, ինչպէս նաեւ մասնաճիւղին վարչութիւնը:

Փակման արարողութեան ընթացքին մոկլի վոհմակի Պայու Քոյր Կասիա Գարամանուկեան ստացաւ Աքելյայի աստիճան, արենոյ խումբի Վարիչ Առաջնորդ Քոյր Կասիա Տիմիճեան ստացաւ Փոխ Խմբապետուհիի աստիճան, պարմանուհի փաղանգի օգնական պատասխանատու Քոյր Մարկրիթ Պոլտագեան ստացաւ Փոխ Փաղանգապետուհիի աստիճան: Արի Ա. խումբը ստացաւ բանակումի լաւագոյն խումբի յուշանուէր: Կարգ մը Քոյրեղբայրներ ստացան իրենց աշխատանքին գնահատականը կատարող վկայագիրներ, ապա խմբապետական կազմը բանակումին խոհարարութիւնը ստանձնած խորհուրդի անդամները՝ եղբ. Գալուստ Գոչունեանը, Քոյր Նորա Պոլտագեանը եւ Քոյր Մարիա Չոլաքեանը պատուեց յուշանուէ-

րներով: Այնուհետեւ, խմբապետական կազմը յուշանուէրով մը գնահատեց մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Արթիւր Ջուլամեանը:

Պաշտօնական փակման արարողութեան եւ խարուկահանդէսին ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը, Շրջանային Սկաուտական Խորհուրդը, Շրջանային Խմբապետութիւնը, մասնաճիւղին վարչութիւնը, նախկին խմբապետներ եւ մասնաճիւղի ծնողներ:

Փակման արարողութեան ընթացքին

վարչութեան անունով խօսք առաւ վարչութեան ատենադպրուհի Քոյր Պիանքա Ջուլամեան-Ատուրեան: Ան բարձր գնահատեց մասնաճիւղին սկաուտ Քոյրերը, եղբայրները, խմբապետական կազմը եւ Սկաուտական Խորհուրդը՝ իրենց տարած անսակարկ եւ անշահախնդիր աշխատանքին համար: Ապա, Քոյրը հրաւիրեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Ֆերմանեանը, որ իր կարգին Խորհուրդի ատենապետին առաջարկով եւ վարչութեան վաւերացումով յուշանուէրներով

պատուեց մասնաճիւղի խմբապետուհի Քոյր Սիրան Պետրոսեանը եւ մասնաճիւղի ծնողներէն եղբ. Ժորժ Չոլաքեանը: Ան վարչութեան որոշումով յուշանուէրով մը պատուեց նաեւ Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Արթիւր Ջուլամեանը:

Խարուկահանդէսի աւարտին Քոյրերը եւ եղբայրները իրարու միացած ձեռքերով երգեցին «Յտեսութիւն» երգը, այն յոյսով որ դարձեալ կը հանդիպին 2009-2010 տարեշրջանի վերամուտին:



ՃԱՆՁՆԱՆՔ ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ

ՄԵՐ ՈՍԿՈՐՆԵՐԸ




Քաղեց՝ Սալբի Լատոյեան ԴԷՅՐՈՒԹ

Եթէ մեր մարմինը ոսկոր չ'ունենար, կը փլէր: Մեր մարմնին կմախքը կազմուած է 206 կարծր ոսկորներէ: Անոնք կը պաշտպանեն մեր ուղեղը, սիրտը եւ թոքերը: Առանց ոսկորի պիտի չկարենայինք կանգնիլ, նստիլ, քալել, վագել եւ ոչ իսկ՝ շնչել:

Ոսկորները ամբողջութեամբ կարծր չեն: Անոնց արտաքին երեւելիք մասը խիտ եւ կարծր է, իսկ մէջը՝ սպունգաձևման է:

Կան տարբեր տեսակի ոսկորներ. կարճ ոսկորներ, տափակ ոսկորներ եւ երկար ոսկորներ:

Երկար ոսկորները ունին երկու ուռած ծայրեր, իսկ մէջը՝ գլանաձև մաս մը, որ կը պարունակէ ծուծը:



Ծուծը, որ կը գրտնրւի կրծքավանդակին, կոնքին եւ կողի ոսկորներուն մէջ, իւրաքանչիւր երկվայրկեան կ'արտադրէ 4-8 միլիոն կարմիր գնդիկներ:

Մեր մարմնին ոսկորները իրարու միացած են յօդերով, որոնք կ'օգնեն ոսկորները շարժելու:

Մեր ձեռքերը ունին 27 ոսկորներ: Բթամատը միւս մասներուն օգնականն է: Բթամատը կ'օգնէ, որ կատարենք գրժլար շարժումներ:

Կոտրած ոսկոր մը անշարժութեան մէջ պահելու համար կը գործածուին գա-

ճով պատրաստուած յատուկ վիրակապեր:

Կոտրուած ոսկոր մը կը վերանորոգուի երկու կողմերէն՝ մինչեւ որ կոտրուածքը անցնի:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՇՈՂԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Շողանկարը ստեղծուած է 1895ին, գերմանացի Ուիլհելմ Ռէոնկէնի կողմէ, որ 1901ին Նոպէլեան մրցանակի կ'արժանանայ իր կարեւոր գիւտին համար:

Շողանկարչութիւնը կ'արձակէ էլեկտրո-մագնիսական յատուկ ճառագայթներ, որոնք զիտնականին անուռնով կը կոչուին Ռէոնկէնեան ճառագայթներ:

Անոնք կ'անցնին մարմնին կակուղ մասերէն, սակայն չեն կրնար անցնիլ հաստատուն մասերէն, ինչպէս՝ ոսկոր, ակուայ, եղունգ... որոնք նկարին մէջ շուքի ձեւով կ'երեւին:

Այս պատճա-

ռով շողանկարի ժամանակ պէտք է մեր մարմնին վրայէն հանենք ոսկի, գօտի, ժամացոյց եւ հաստատուն այլ իրեր:

Շողանկարչութիւնը կը գործածուի ընդհանրապէս բժշկութեան մէջ:


Ռէոնկէնեան ճառագայթները շատ վտանգաւոր են, եւ այդ սենեակին մէջ աշխատողները յատուկ հագուստներ կը հագնին եւ կը մնան բժշկական հսկողութեան տակ:

Շողանկարչութեան մեքենան կը բաղկանայ Ռէոնկէնեան ճառագայթներէ եւ «նեկաթիֆ» ֆիլմէ:

Ռէոնկէնեան ճառագայթները կարելի չէ տեսնել, ինչպէս այլ ճառագայթներ, օրինակ՝ լոյսը, սակայն անոր հետքերը կը տեսնենք նկարչական ֆիլմերու մէջ:

Շողանկարչութիւնը կարելի է օգտագործել զանազաներու համար բիւրեղի տեսակները եւ որակը:





ՏԱՐՈՐԻՆԱԿ, ԲԱՅՑ ԻՐԱԽ...



● Ամերիկացի Լի Ռեամոն աշխարհի ամենէն երկար եղունգները ունեցող անձն է: Ան տարիներէ ի վեր եղունգները չէ կտրած: Եղունգներուն հասակը կը հասնի 7.51 մեթրի: Անձ մը առաջարկած է գնել եղունգները սմ-ով:

● Չինացի Հի Փինկ-Փինկը աշխարհի ամենէն կարճ մարդն է: Ան ծնած է 1988ին: 21 տարեկան է եւ հասակը 73 սմ. է: Այս տարի ան ստացաւ «Կինէս»ի յատուկ մրցանակ: Փինկ-Փինկ կը տառապի ոսկրային բարդութենէ: Ան ընտանիքին երրորդ զաւակն է: Երկու քոյրերուն հասակը բնական է:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ԱՐՋԵՐԸ

Երեք տարբեր տեսակի արջեր կարելի է գտնել. սեւ, սրճագոյն եւ սպիտակ: Սրճագոյն արջերը կ'ապրին լեռներու վրայ, կանաչութեամբ եւ խոտերով ծածկուած տարածութիւններու մէջ: Անոնց հասակը կ'ըլլայ շուրջ 2.5 մ. եւ ընդհանրապէս կը կշռեն 100-300 քկ.:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Ձիս կ'ուտեն
մեռնելէս վերջ:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր ամպ):

էգ արջերը աւելի թեթեւ կը կշռեն (90-200 քկ.)՝ քան արու արջերը: Էգ արջերը իրենց քոթոթներուն հոգ կը տանին եւ ժամանակին մեծ մասը կ'անցընեն ճաշ փնտռելով եւ ուտելով:

Արջերը խոտ, վայրի պտուղներ եւ արմատներ կ'ուտեն: Անոնք կ'ուտեն նաեւ կենդանիներ եւ միջատներ:

Կարգ մը երկիրներու մէջ, լճակներ կամ ծովեր ունեցող քաղաքներու մօտ ապրող արջերը ձուկ ալ կ'ուտեն:

Հետաքրքրական է նշել, որ ձմեռը, երբ ձիւնի փաթիլները լեռները կը ծածկեն, արջերը կը քնանան 5-6 ամիս: Անոնց մարմինը այնպէս մը կազմուած է, որ իր մէջ սնունդն ու ջուրը կը պահէ՝ ձմեռը ապրելու համար: Անոնք արջերը կը սկսին փնտռել քնանալու համար հանգիստ վայր մը: Անոնք լեռ կը բարձրանան եւ կը փնտռեն քարայր մը, ուր կարենան հանգիստ քնանալ վեց ամիս: Անոնք կրնան փոս մը փորել հսկայ ծառի մը տակ, որուն արմատներն ալ կ'ուտեն, որպէսզի Հոկտեմբերին հոն քունի անցնին:

Այսպէս, վեց ամիս ետքն է որ անոնք կ'արթնան իրենց խոր քունէն: Արու արջերը մէկ-երկու ամիս աւելի կանուխ դուրս կու գան իրենց ապաստանէն եւ կը սկսին պտրտիլ անտառներու մէջ՝ ճաշ փնտռելու համար:

Արջերը երբ իրենց խոր քունէն արթնան շատ անօթի կ'ըլլան: Իրենց առաջին գործը կ'ըլլայ համով կենդանի մը ուտել: Անոնք կը սկսին փնտռել անասուններ, որոնք ձմրան ցուրտին չեն դիմացած եւ պաղէն սատկած են:

Արջերուն թշնամիները մարդիկն են, որոնք կը փորձեն զանոնք որսալ, որովհետեւ անոնք շատ արժէքաւոր են:





Էլի Հուլիշեան

ՄՏԱՑԱՆՔ

Հայկական Յեղասպանութեան Թանգարանէն ստացանք հետեւեալ հրատարակութիւնները.-

- Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Հայկ Դեմոյեան, Երեւան, Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, 2009:

- Հայկական լեռնաշխարհի պրոնզէ դարեան սպառազիւնութիւնն ու ռազմարուեստը, «Հայոց պատերազմները եւ ռազմարուեստը» մատենաշար, Հատոր 1, Հայկ Դեմոյեան, Երեւան, 2009:

- Վանի թագաւորութեան պատերազմներն ու ռազմարուեստը, «Հայոց պատերազմները եւ ռազմարուեստը» մատենաշար, Հատոր 2, Հայկ Դեմոյեան, Երեւան, 2009:

- Հայոց Յեղասպանութիւն (նիւթերի ժողովածու)- Կազմող, պատասխանատու խմբագիր եւ յառաջաբանի հեղինակ դոկտ. Լարենտի Բարսեղեան, Երեւան, 2005:

- Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում եւ Մեծն Բրիտանիան (1915-1918 թթ.)- Տիգրան Սարուխանեան, Երեւան, 2005:

- Իտալիայի արտաքին գործերի նախարարութեան պատմական դիւանագիտական արխիւի վաւերագրերը հայկական հարցի մասին, հատոր Ա., 1913-1923 թթ.- նիւթը հաւաքեց, կազմեց, թարգմանեց, յառաջաբանը գրեց եւ հրատարակութեան պատրաստեց՝ Արամայիս Բալոյեան, Երեւան, 2008

տարակրթութեան պատրաստեց՝ Արամայիս Բալոյեան, Երեւան, 2008

- Հայոց Յեղասպանութիւն եւ հրէական հոլոքոստ- Տիգրան Մաթոսեան, Երեւան, 2005:

- Յիշատակի պատը- Յակոբ Սողոմոնեան, Երեւան, 2006

- Հայ ժողովրդի կորուստները առաջին աշխարհամարտի տարիներին- Կազմող, յառաջաբանի եւ ծանօթագրութիւնների հեղինակ Անուշաւան Զաքարեան, Երեւան, 2005:

- Աքսորեալ ժողովուրդ (մէկ տարի հայոց պատմութիւնից)- Ալմա Եուհանսոն, Երեւան, 2008:

- Տեղահանութիւն եւ ոչնչացում (տեղահանութեան իսկական պատկերը)- Հասան Ամշա, Երեւան, 2007:

- Remembering and understanding- Roupen Paul Adalian, Yerevan, 2008:

- Le Génocide des Arméniens- Claude Mutafian, Érévan, 2008:

- Ակնարկներ Հայկական Յեղասպանութեան մասին, Փրոֆ. Տքթ. Վահագն Տատրեան, 2004 :

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Գերմանիոյ ֆուլթպոլի կազմերէն:
- Առանձնարան - Շին Ֆէյնի նախկին գինուորական թեւը:
- Հեթանոսական կրօնք - Ռագմական:
- Հնձուած ցորենի խուրձ - Ներս վազող:
- Իգական սերմ - Եգիպտական դից:
- Օձադանակ - Հայկական ամիսներու Ը. օրը:
- Դռնահար - Լեզէոնական ռագմաճակատ:
- Ստացական ածական - Թուշ - Դրկից տառեր:
- Տարի - Շառաւն - Ինթէր Միլանի պրագիլցի յառաջապահ:
- Ուքրանիոյ մայրաքաղաքը - Յետոյ - Խումբ:
- Թեթեւ մարմնամարզի տասը ձեւերը:
- Փոքրացնող մասնիկ - Հայաստանի գետերէն - Այբուբենէն:
- Արական օտար անուն - Իգական օտար անուն:
- Առասան - Գաղտնի գործակալ թիւ 007՝ Ճէյմս:
- Յարաբերական դերանուն - Լայնուլթիւն - Թեւ մանելու ձեռնային կազմած:
- Հինաւուրց - Պուրակ:
- Փոքրացնող մասնիկ - Թմրեցուցիչ հիւթով բոյս - Շաղկապ:
- Գաղթը - Յաւի ճիչ - Կիլիկեան քաղաք:
- Իրերայաջորդ գիրեր - 1982ի լաւագոյն ֆիլմի Օսքարին արժանացած ժապաւէնը - Անձնական դերանուն:
- Սքի - Գէտրգ էմիլի երկերէն - Որովհետեւ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Սերպ թենիսիստ:
- Հաւկիթ - Մէկ հատիկ - Յորջորջում:
- Գետեղերեայ ծառ - Անձնական դերանուն - Շաղկապ - Դրկից տառեր:
- Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի աստղերէն:
- Ողիմպիական «կարմիր» ցամաքամասը - Ժամանակի միաւոր:
- Կռթնեյիք մաս - Թանաքաման - Այբուբենէն:
- Ֆրանսական գետ - Դեղնագոյն թանկարժէք քար:
- Բազմուլթիւն - Գեղեցիկ նահապետը - Կռնակ:
- Խաղ - Բերան փոթոթող համ - Երախայրիք:
- Հայկական հին տոմարի Ժ. ամիսը - Կրակ - Դուռ - Տառի մը դրացիները:
- Տիրան Չրաքեանի գրչանունը - Իր էրկը սպաննած կին - Հուր:
- Տնկելի ոստ - Ջրային թռչուն - Ամերիկացի թենիսիստ:
- Միջերկրականեան մայրաքաղաք - Հրանիւթ:
- Փոխադարձ դերանուն - Արական անուն - Փոքրացնող մասնիկ - Սիգանք:
- Արեւելեան իջեւան - Սասնոյն ամէնէն հին ֆետայիներէն - Լակ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1																			
2																			
3																			
4																			
5																			
6																			
7																			
8																			
9																			
10																			
11																			
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1	Լ	Ա	Ր	Ա	Ք	Է	Ձ	Ե	Պ	Ա	Շ	Ե	Ա	Ն					
2	Ա	Ր	Ե	Ն	Ա	Կ	Ս	Ն	Ա	Ր									
3	Ի	Ն	Ի	Ա	Կ	Ա	Ր	Ա		Հ	Ա								
4	Ի	Մ	Ա	Ր	Ա	Մ	Կ	Տ	Ա	Կ									
5	Տ	Ո	Կ	Ա	Ն		Ջ	Է	Կ	Ն	Ա								
6	Ն	Ա	Ք	Օ				Լ		Հ	Ա	Մ	Ա						
7	Կ	Ա	Ն	Ֆ				Ր	Ո	Ս	Ա	Կ	Ա	Լ					
8	Ե	Ջ	Ն	Ե	Տ			Ր	Ո	Տ	Ի	Ն							
9	Թ	Մ	Ա	Ր	Ի			Ր	Շ	Ի	Լ								
10	Ա	Ր	Ա	Ս	Ա	Ն		Կ	Ո	Կ	Ա	Ն	Լ	Ի					
11	Ս	Ա	Լ			Ա	Գ	Ե	Վ	Ա	Ջ		Ք	Ա	Մ				
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			

ԹԻՒ 179 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԲՈՒՄԸ

